



Հայկական գիտահետազոտական հանգույց Armenian Research & Academic Repository



Սույն աշխատանքն արտոնագրված է «Ստեղծագործական համայնքներ
ոչ առևտրային իրավասություն 3.0» արտոնագրով

**This work is licensed under a Creative Commons Attribution-NonCommercial
3.0 Unported (CC BY-NC 3.0) license.**

Դու կարող ես.

պատճենել և տարածել նյութը ցանկացած ձևաչափով կամ կրիչով
ձևափոխել կամ օգտագործել առկա նյութը ստեղծելու համար նորը

You are free to:

Share — copy and redistribute the material in any medium or format

Adapt — remix, transform, and build upon the material

34^{րդ} ՀՐԱՏԱՐԱՆԿՈՒԹԻՒՆ ԴԱԽԹԵԱՆ ԳՈՐԾԱԿԱՆՈՒԹԵԱՆ

ՆԱԽԱԿՐԹՈՒԹԵԱՆ ԱՄԲՈՂԶ ԴԱՍԸՆԹԱՅԲ
ՀԱՄԱԿԵԴՐՈՆ ԴՐՈՒԹԵԱՄԲ

ՆՈՐ ԴՊՐՈՅ

Բարոյագիտութ., Բարոյագ. Կրթութիւն, Պատմութ.,
Աշխարհագրութիւն, Թուարանութիւն, Երկրաչափութիւն,
Գիտական Ուսումներ, Մայրենի լեզու.

Պ Ա Տ Կ Ե Ր Ա Ջ Ա Ր Դ

Sarrnական շնորհացք

Է. ՊՐԱԿ

ԳԻՐԲ ԱՇԱԿԵՐՏԻՆ

اشبو مكتب جديد نام اثر معارف نظارت جليه سنك في ٢٠ تموز سنه ١٣١٦ تاريخي
و ١٨٧٧ نومرولى رخصتنامه - يله وسه مپا ط داود بان . مرفقيه ترتيب وطبع اولتمشدر

Հ Ր Ա Տ Ա Ր Ա Կ Ի Չ

ՍՄԲԱՏ ԴԱՒԹԵԱՆ

191.99-8
7-23



Կ. ՊՈԼԻՍ

ՀԱՊԳՐՈՒԹԻՒՆ Կ. ՄԻՆԱՍԵԱՆ
Սուրբան-Համամ Թիւ 14
1902



29 MAR 2013

իր Տեղապահ վրթանէսի ատեն: Ասոր օրով, Մուշեղ Պոլլա երթալով Մօրիկ Կայսրին հետ կրօնական խընդիրներու վրայ տեսակցեցաւ:

18. Հայոց Տոմար. — Հայոց հին Տոմարը արեգակնային էր՝ 12 երեսնօրեայ ամիսներով ու հինգ անջեաց օրերով եգիպտականին ու պարսկականին պէս: Այդ 12 ամիսներն էին. Նաւասարդ, Հոռի, Մահմի, Տրէ, Քաղոց, Արաց, Մեհեկան, Արեգ, Ահեկան, Մարերի, Մարգաց, Հրօսից ու Աւելեաց:

Քրիստոսի 552 թուին, Հայոց համար Նոր տոմարական ուղղութեամբ թուական մը սկսաւ, զատկական Հինգ հարիւրեակի հաստատութեամբ: Եւ՝ որովհետեւ, 574ին, Մովսէս Եղիվարդեցի Կաթողիկոսն եղաւ այդ տոմարական հաշիւը գործադրողը՝ Մովսէսի անունով կոչուած է նորոգութիւնն ալ, թուականն ալ:

1685 Հայոց այդ տոմարական թուականը 551 տարուան տարբերութիւն ունի Քրիստոսի թուականին, այնպէս որ Քրիստոսի սրբէէ մէկ թուականը գտնելու համար, պէտք է զեղջեղ անկէ 551 թիւը:

Մեր հին Ամանորը կամ Նաւասարդի սօնը կը զուգադիպի Օգոստոս 11ին:

14. Ի՞նչ է Հեոնիկոնը: — Ո՞ր Կարուղիկոսի օրով բնութեանցաւ: — 15. Ի՞նչ քաւ Ներսէս Բ. Աւետարանի Կարուղիկոսը: — 16. Հայ եկեղեցին ե՞րբ անկախ հռչակուեցաւ: — Մուշեղ ինչո՞ւ գնաց Մօրիկ Կայսրին: — 17. Հայերը ե՞ն առաջ ի՞նչպէս կը հաւուէին սարին ու ամիսները: — Որո՞նք են ամիսներու հին անունները: — Մովսէս Եղիվարդեցի Կարուղիկոսը ի՞նչ փոփոխութիւն մտցուց տոմարին մէջ: — Եղիվարդեան բուականը ի՞նչ տարբերութիւն ունի Քրիստոսի բուականէն: — Նաւասարդ ամսու առաջին օրը հիմնականն ո՞ր ամսունն ո՞ր օրուան կը հանդիպի:

Նոր Գարոց է. Պրակ

8-PP-KH
ES-7

7. ԴԱՍ. — ՀԱՅ ԵԿԵՂԵՑԻՆ ՈՒ ՏՈՄԱՐԸ (Շար.)

18. Հայ Տումարի երկրորդ նորոգութիւնը. — Մովսէս Կաթուղիկոսի տոմարական նորոգութիւնէն հինգ հարիւրամեակ մը, այսինքն 552 տարի ետք, 1084ին Յովհաննէս Վարդապետ Սարկաւազ երկրորդ նորոգութիւն մը կ'ընէ հայ տոմարին և կ'ընդունի Նահանջի դրութիւնը, այսինքն չորս տարին անգամ մը, փոխանակ հինգի, վեց անելաց օրեր կը հաշուէ: Այս դրութիւնը կը կոչուի ասրիսարգադի տոմար:

Երրորդ նորոգութիւն մ' ալ եղած է 1616ին Սարկաւազադի տոմարէն 532 տարի ետք, Չուղայի մէջ. բայց ընդհանրացած չէ: Այդ թուականը կոչուեցաւ Ազարիայի թուական:

19. Քրիստոսի քուական. — Քրիստոսեայ ազգերու ընդունած միջազգային թուականն է Քրիստոսի թուականը: Այդ թուականին առաջին տարին կը համարուէր Քրիստոսի ծննդեան տարին որ Հռոմի հաստատութեան 754րդ տարին է:

20. Կեկին Կարուղիկոսներ. — Յոյներուն ու Հայերուն մէջ կրօնական հակառակութեան հետեւութիւնն ան եղաւ որ Մօրիկ Կայսրը իրեն հպատակ Հայոց վրայ Յովհաննէս անունով Քաղկեդոնեան Եպիսկոպոս մը Կաթուղիկոս դրաւ 580—590: Իսկ Պարսից հպատակ Հայոց վրայ Մովսէս մնաց Կաթուղիկոս: Առաջինին աթոռն էր Աւան, իսկ վերջինին գլխաւոր աթոռն էր Դուին: Այսպէս, Զ. դարուն վերջերը, երկու Կաթուղիկոսութիւն կար: Այս կրկնութիւնը շատ երկար չտեւեց, Յովհաննէսի մեռնելովը լմնցաւ (գրեթէ 661ին):

18. Հայ տումարի երկրորդ նորոգութիւնը ե՞րբ և ո՞ւր կողմէ եղաւ: — Ի՞նչպէս կը հաշուուի: — Երրորդ նորոգութիւնը ե՞րբ եղաւ և ո՞ւր: Ի՞նչ կը կոչուի: 19. Քրիստոսեայ ազգեր հիմա ի՞նչ քուական կը գործածեն: — Քրիստոսի ծնած տարին Հռովմի հաստատութեան 754ին երրորդ տարին կը գուգարիլի: — 20. Հայերուն և Յոյներուն կրօնական հակառակութեան հետեւանքն ի՞նչ եղաւ: — Ո՞ւր նսաւ Քաղկեդոնեան Յովհաննէս Կարուղիկոսը: — Պարսիկներու հպատակ Հայերուն Կարուղիկոսը ո՞վ էր այն ատեն և ո՞ւր էր անոր արողը: Ե՞րբ վերջացաւ կարուղիկոսութեան երկունքիւնը և ի՞նչ կերպով: — Ո՞ւր է հիմա Հայերուն ընդհանրական Կարուղիկոսը: — Իսկ մասնաւոր Կարուղիկոսները ուր են:



8. ԴԱՍ. — ԱՄՓՈՓՈՒՄ Զ. ԱՄՍՈՒԱՆ

Եկեղեցիներ. — Քրիստոսեայութիւնը երեք եկեղեցիի բաժնուած է՝ Արեւելեան, Արեւմտեան և Բողոքական:

Արեւելեանը, որ հաստատուած է Առաքեալներուն ձեռքով, ապա տարածուեցաւ Հայերուն մէջ, Յունաստան, Եգիպտոս, ևն:

Հայոց եկեղեցին անդրանիկն եղաւ և հպատակեցաւ Թաղէոս ու Բարթուղիմէոս առաքեալներու ձեռքով (Գ. Պրակ, էջ 16—17, Դաս 5—6):

Արեւմտեան եկեղեցին հիմնուեցաւ Հռովմի մէջ և տարածուեցաւ Եւրոպա և Ասիոյիկէ. — կ'ըսուի նաեւ Պապական կամ Հռովմէական եկեղեցի:

Բողոքական եկեղեցին հաստատած է Լուսեր որ մերժեց խորհուրդներէն և ձեռքէն շատերը:

Տիեզերական ժողովներն են Նիկիոյ, Կ. Պոլսոյ և Եփեսոսի ժողովները զորոնք կ'ընդունի մեր եկեղեցին, բայց միւսները չ'ընդունիր:

Ս. Ղևոնդեաններն ու Ս. Վարդանեանները պաշտպանեցին քրիստոնէական հաւատքը և նահատակուեցան: Ասոնց յիշատակը կը տօնենք մասնաւոր օրեր:

Եկեղեցիին եօրը պաշտօններն ու աստիճաններն են Դռնապանութիւն, Դպրութիւն, Զահընկալութիւն, Երգմանցուցչութիւն, Կիսասարկաւագութիւն, Սարկաւագութիւն և Բահանայութիւն:

Հենոսիկոնը եկեղեցական միութեան թուղթ մ'է զոր Բարգէն Կաթողիկոսի օրով ընդունեց մեր եկեղեցին, Վաղարշապատի ժողովին մէջ (491), Ներսէս Բ. Աշտարակեցի Կաթողիկոսն ալ 527 թուականին ժողով գումարեց Դուինի մէջ:


Հայ եկեղեցին անկախ հռչակուեցաւ Մովսէս Կաթողիկոսի օրով և Հայերուն համար 552ին հաստատուեցաւ Նոր տոմարական թուական: Այս թուականը 1084ին և 1616ին ալ ուրիշ բարեփոխումներ կրեց:

Քրիստոսի քուականը այժմ բոլոր ազգերէն ընդունուած է և կը հաշուուի Քրիստոսի ծնունդէն:

Կրիկն Կարողիկոսներ ունեցան Հայերը Մօրիկ Յոյն Կայսրին օրով. Աւանի մէջ կար ամիս մը ուր կը նըստէր Յովհաննէս Եպիսկոպոսը և Դուինի մէջ ալ Մովսէս Կաթողիկոսը: 661ին վերջացաւ Քայս երկուութիւնը:



ԱՇԽԱՐՀԱԳՐՈՒԹԻՒՆ



1. ԴԱՍ. — ԵՒՐՈՊԱԿԱՆ ԹՈՒՐԻՒՄ

(Մով, ծոց, քերակղզի, կղզի)

1. Մովեր. — Եւրոպական Թուրքիոյ ծովերն են. Սեւ ծով, Մարմարա, Արքիպելագոս, Յոնիական ծով, Ազրիական ծով:

Սեւ ծովը Մարմարայի կը միանայ Վոսիորի Նեղուցով (Գ. Պրակ, էջ 23—25, Դաս 5—6), և Մարմարան Արքիպելագոսի հետ կը հաղորդակցի Տարսանէլի (Չանագ-գալի) Նեղուցով:

2. Ծոցեր եւ քերակղզիներ. — Արքիպելագոսի եղերքն են Մարոսի խորշը, Աթոսի ծոցը, Սէլանիկի ծոցը, Աթոսի կամ Այնորոզի թերակղզին, Կէլիպօլուի թերակղզին:

Սեւ ծովու եզերքն է Եէմլինէ հրուանդանը:

3. Կղզիներ. — Եւրոպական Թուրքիոյ ծովեզերքին մօտ կան շատ մը կղզիներ, որոնք ցամաքի լեռներուն դէպ ի ծով շարունակութիւնն են:

Արքիպելագոսի մէջ են Թասոս, Սամոթրակէ, Իմպրոս, Լեմնոս, եւն:

Միջերկրականի մէջ՝ Կրետէ կամ Կիրիա:

1. Որո՞նք են եւրոպական Թուրքիոյ ծովերը: 2. Ծոցեր եւ քերակղզիները: 3. Որո՞նք են կղզիներ եւ ո՞ր ծովերու մէջ կը գտնուին:



2. ԴԱՍ. — ԵՒՐՈՊԱԿԱՆ ԹՈՒՐԻՒՄ

(Լեռ, հովիտ, դաւոս, գետ, լիւն)

4. Լեռներ. — Եւրոպական Թուրքիա ունի երկու գլխաւոր լեռնաշղթայ. Տինարեան կամ Ազրիական և Պալքանեան:

Աղբիւրիկան ճիւղին լեռներն են Պոսնայի և Ալպա-
նիայի լեռները: Աս վերջինին գլխաւոր դագաթն է
Չարտաղ:

Պալքանեան լեռնաշղթայի ճիւղերն են. Արեւելեան
հիւսիսային Պալքան և Արեւմտեան հարաւային Պալ-
քան: Աս վերջինին լեռներն են Հոտտոի կամ Տեսքոթ-
տաղ, Աթոս, Սթրանձա:

Չարտաղէն դէպ ի Հարաւ կ'երկնան Մեծօլօ, Կի-
մարեան և Ոլիմպոս լեռները:

5. Հովիսներ եւ դաշտեր. — Հէրսէքի հովիտը և՛ Պոս-
նայի, Գոտովայի, Մարիձայի և Գրզանլըզի դաշտերը:

6. Գետեր. — Եւրոպական Թուրքիա երկու աւա-
զանի կը բաժնուի. Արքիպեղագոսի և Յոնիական-Աղ-
բիականի:

Արքիպեղագոսի աւազանին մեծ գետն է Մարիձա
որ ունի Թուեձա և Արտա ճիւղերը: — Սթրումա և
Վարտար գետերը:

Յոնիական-Աղբիական աւազանին մէջ են Տրին և
Գալամոս գետերը:

7. Լիճեր. — Շքոտրայի լիճը, Եանեայի լիճը, Օլս-
բիտայի լիճը, Բրէզպայի լիճը և Գաստորիայի լիճը:

4. Որո՞նք են Եւրոպական Թուրքիոյ լեռները: 5. Իսկ հովիսներ և
դաշտերը: 6. Գետերը: 7. Լիճերը:

3. ԳԱՍ. — ԵՒՐՈՊԱԿԱՆ ԹՈՒՐԿԻԱ

(Կլիմայ եւ բերք)

8. Կլիմայ. — Եւրոպական Թուրքիա ունի բարե-
խառն կլիմայ: Բայց Չմեռը ցուրտ է: Առատ ձիւն կը
տեղայ և երկար ատեն կը մնայ: Ծովեզերեայ կողմերն
ալ անձրեւը շատ է:

9. Բերք. — Եւրոպական Թուրքիա բարեբեր եր-
կիր է. կ'արտադրէ արմտիք կամ հացաբոյսեր (ցորեն,
գարի, եգիպտացորեն, որիզ, վարսակ, հաճար, գետ-
նախնձոր): Եսեւ բամբակ, կանեփ, ծխախոտ, ձէթ,
ձիթապտուղ, կնձիթ, վարդի եղ, նարինջ, կիտրոն,
թուզ, բժշկական տունկեր, խէժ, թուռատու տունկեր,
աֆիոն, մետաքս, վառելիք և շինութեան փայտեր:

Հանքերն են՝ երկաթ, կապար, քրոմ, սնդիկ, հան-
քածուխ, աղ, շինուածաքար:

Կենդանիներն են՝ ոչխար, այծ, ձի, եղ, էջ:

10. Եւրոպական Թուրքիա ունի բանուկ վաճառա-
կանութիւն և օտար երկիրներէ կ'ընդունի հանքածուխ,
շաքար, խահուէ, գինի, երկաթեղէն, մոմ, եւն:

8. Ի՞նչպէս է Եւրոպական Թուրքիոյ կլիման: 9. Ի՞նչ բերքեր
ունի: 10. Ի՞նչ կ'ընդունի օտար երկիրներէ:



4. ԳԱՍ. — ԱՍԻԱԿԱՆ ԹՈՒՐԿԻԱ

(Ծով, ծոց, բերակղզի, կղզի)

11. Ծովեր. — Ասիական Թուրքիոյ ծովերն են.
Կարմիր ծով, Սուէզի ջրացք, Սեւ ծով և Պարսից ծոց:

12. Ծոցեր ու բերակղզիներ. — Ասիական Թուրքիա-
յի Արեւմտեան և Հիւսիսային մասը (Միջերկրական, Ար-
ֆիպեղսագոս եւ Մարմարա) ծովեզերքը ծամածուռ է և
կը կազմէ շատ մը մանր ծոցեր ու խորշեր, ինչպէս
Իզմիրի (Չմխռնիս) ծովածոցը, որուն Հարաւային
կողմն է Չէշմէի թերակղզին (Կղզոսկեճ) և Գարապրուն
հրեանդանը, նոյնպէս՝ Աքալանովայի, Մանդալիայի և
Քիոսի ծոցերը:

Միջերկրականի եզերքը՝ Ատալիայի ծոցը, և Իսկէն-
տէրունի կամ Իսոսի ծոցը:

Սեւ ծովու եզերքը՝ Սամառնի խորշը, Իւնիէի և Գա-
րապորունի հրուանդանները :

Մարմարայի եզերքը՝ Նիկոմիդիոյ կամ Իզմիտի ծոցը ,
և Կիլիքոնի (Գարու սաղի) թերակղզին :

13. Կղզիներ. — Ասիական Թուրքիոյ կղզիները ,
Արքիպագոսոյ մէջ, կը կազմեն ձէզախրի-Պահրը-Սէ-
ֆիտի կուսակալութիւնը (Զ. Պրակ, էջ 24, Գաւ 7),
և ասոնք են՝ Հոռոս, Միտիլի, Սաքըզ, Լիմնոս,
Իմպրոս, Թենետոս (Պոհնա-Ա.սաւը), ևն :

11. Որո՞նք են Ասիական Թուրքիոյ ծովեր. 12. Ծոցե՞ր. 13.
Կղզիներ՞ :



5. ԳԱՍ. — ԱՍԻԱԿԱՆ ԹՈՒՐԿԻԱ

(Լեւ, հովիտ, գետ, լիճ)

14. Լեռներ. — Ասիական Թուրքիոյ լեռներուն ա-
մենէն նշանաւորն է Ալլի-տաղ (Մասիս կամ Մարաս)
որ յիշուած է Ս. Գրքի մէջ : Արարտեան լեռնազօտիին
ճիւղերն են. Բիւրակիւնի ճիւղը (Մարը-Տիսի, Տերսիս
եւ Գօզար), Քրդական լեռնաշղթան և Գօք լեռնաշղթ-
թան :

Տորոսեան լեռներ որ կը սկսին Ալա-տաղէն և երեք
ճիւղ ունին . 1) Բուն Տօրոս (Պուլխար-սաղը, Պագրը-սաղ,
Կեալուր-սաղ, Գօնա-սաղ, Ալմա-սաղեւ Բեշիշ-սաղ [Ողիւ-
պոս] Պրուսայի մօտ) : 2) Անիթի Տօրոս, և 3) Արեւելեան
Տօրոս (Միքան-սաղը, Արս-սաղը, Նեւրոս եւ Գրգուռ) :

Լիբանան և Անիթի-Լիբանան լեռները :

15. Հովիտներ. — Սեւ ծովու և Տօրոս լեռներու
մէջ, Լիբանան լեռներու մէջ, և Միջագետքի կողմերը
(Եփրատ-Տիգրիսի միջեւ) ընդարձակ հովիտներ կան :

16. Գետեր. — Զիւրիւք-տու (Ճորոխ) Եէջիլ-ըրմազ

(Խրիս), Գըզըլ-ըրմազ, Սագարիա : Սուսուրլու կամ Մի-
խալըճ և Գօճա-չայ : Պագրը-չայ, Կէտիզ (Քիւլջիւք-Մե-
սերեզ), Պէօլլուք Մէնտերէզ, Գարա-տու, Սիհան, Ճի-
հան, Եփրատ և Տիգրիս, որոնք միանալով կը կազմեն
Շաթ-իւլ-Արապ :

17. Լիճեր. — Վանայ ծով, Նազուկ լիճ, Թուզ-
կէօլ և՝ Պուրաուրի, Ազշէհլըի, Պէշէհլըի լիճերը : Ագ-
տէնիզ, Գալիլեայի ծով, Մեռեալ ծով : Սապանճայի,
Իզնիկի (Նիկիս) և Ապոլոնիոնի լիճերը :

14. Որո՞նք են Ասիական Թուրքիոյ լեռնազօտներ, 15. Հո-
վիտներ՞, 16. Գետեր՞, 17. Լիճեր՞ :



6. ԳԱՍ. — ԱՍԻԱԿԱՆ ԹՈՒՐԿԻԱ

(Կլիմայ եւ բերք)

18. Կլիմայ. — Ասիական Թուրքիոյ կլիման ամէն
կողմ միեւնոյն բարեխառնութիւնը չունի : Արեւելեան
հիւսիսային կողմերը ձմեռը շատ ցուրտ ու երկարատեւ
է : Գէպի Հարաւ-արեւմուտք՝ աւելի մեղմ է և ձմեռը
կարճատեւ : Հարաւային կողմը տաք ու վատառողջ :

19. Բերքեր. — Ասիական Թուրքիոյ ընդհանուր
տաղբութիւններն են. արմտիք, խաղող, նարինջ, եղ-
ջերենի, թուզ, նուշ, պտուղներ, ձէթ, ծխախոտ, ա-
փրոն, բամպակ, բուրդ, կանեփ, տորոն, ալաժահրի,
շուշմա, սխտոր, ատաղձ, ձուկ, սպունգ, եւ այլն :

Ունի հարուստ հանքեր որոնցմէ ոմանք կը շահա-
գործուին, և կրնան արտադրել ածխահանք, պղինձ,
կապար, երկաթ, արծաթ, ծովախրիտ, քրոմ, դա-
ռիկ, զմռնիա (զմիսարե) քարիւղ, մետաքս, աղ, մար-
մարիոն, եւ այլն :

Անասնաբուժութիւնը զարգացած է. ծանօթ են Գա-
րամանի ոչխարը և Էնկիւրիւի այծը: Տեղ տեղ շատ հող
կը տարուի շերամապահութեան որ շահարեք արուեստ է:

Ասիական Թուրքիոյ ծովերն ու լիճերը կուտան ա-
ռաա ձուկ, (անձրուկ, աղկեր, թիւնիկ, թիւնոս, թը-
րածուկ, վահանաձուկ, տարեխ, օձաձուկ):

20. Ասիական Թուրքիա կը ներմուծուին Եւրոպայէն
ամէն տեսակ առեւտրական նիւթեր:

18. Ի՞նչպէս է Ասիական Թուրքիոյ կլիման. 19. Ի՞նչ բերե-
ունք: Անասնաբուծութիւնն ու շերամաբուծութիւնն ի՞նչպէս են:
Ի՞նչ ձուկեր կ'արտադրէ: 20. Եւրոպայէն ի՞նչ նիւթեր կը ստանայ:

7. ԳԱՍ. — ԳԵՂԸ ԿԱՄ ԳՍՂԱՌԸ

(Տեղագրութեան վրայ հարցումներ):

1. Ձեր գեղին կամ քաղաքին ո՞ր կողմը կ'ընայ
Կառավարութեան յատուկ շէնքը:

2. Ո՞ր պաշտօնատարները կան հոն: (Գայնագաւ,
Հաֆիւն, Միւֆթի, Դատական պաշտօնեաներ, Պեղեսիյեի
ժողով, ևւն:)

3. Ի՞նչ թաղ կայ ձեր բնակած քաղաքին մէջ,
գրեցէք անունները, և ձեր գծած քարտէսին վրայ ա-
նոնց գիրքը նշանակեցէք:

4. Ուրիշ ի՞նչ բաներ կան յիշելու արժանի, ի՞նչ
բերքեր կ'ելլէ, ի՞նչ արհեստատիրներ կան, ևւն:

Հրահանգ (*)

Կէտերուն տեղ պէտք եղած բառերը գնելով՝ ամբողջացուցէք հետեւ-
եալ խօսքերը:

1. Ասիական Թուրքիոյ գլխաւոր քաղաքներն են (Ըսկ'ի

(*) Այս և յաջորդ հրահանգները կը գնենք իբր նմոյշ . Ուսուցիչները
կրնան նոյն ուղղութեամբ ուրիշ հրահանգներ ալ պատրաստել:

գո՛նէ 10 քաղաքի անուն): — 2. Էնկիւրիի այծը կ'արտադրէ ընծիր...
որ առուսուրի գլխաւոր նիւթ մ'է: — 3. Ասիական Թուրքիոյ մէջ ա-
մենէն բարձր լեռն է, Եւ ամենէն մեծ գետն է որ կը թափի
.... ծոցը: — 4. Շաք-իւլ-Արապ գետը կը կազմուի Երկու նիւթերէ,
.... Եւ ... որոնք կը բղխին Եւ իրենց ընթացքին մէջ կը թրջեն
հետեւեալ քաղաքներն ու երկիրները (գո՛նէ 4—5 անուն): —
5. Օսմանեան երկիրներու վարչական բաժանումները հետեւեալ ա-
նուններն ունին ... : — 6. Ճէզայիրի-պահրի-ՍէՔիքը (Միջերկրականի
կղզիները) կը կազմեն վիլայէթ մը որ ունի.... սանճագ,, ..
....,, .. : — 7. Բաղէ, Սղեթ . Մուս Եւ Կինն գաւառները (սակ-
ձագ) ի կուսակալութեան (վիլայէթ) մէջ են:



8. ԳԱՍ. — ԳՈՐԾՆԱԿԱՆ ՀՐՈՀԱՆԳ

1. Աշխարհագրական քարտէսին վրայ նշանակեցէք
Եւրոպական և Ասիական Թուրքիոյ գլխաւոր լեռնաշղ-
թաները, գետերը, լիճերը, ծովերը, ծոցերը, կղզիները:

2. Դէ՛մ առ դէ՛մ գրեցէք Եւրոպական և Ասիական
Թուրքիոյ բերքերը, և ըսէ՛ք թէ ի՞նչ բանի կը գործած-
ուին անոնք:

3. Գրեցէք թէ ի՞նչ նիւթեր կը ներածուին (այս-
ինքն օտար երկիրներէ կը բերուին) Տաճկաստան:

4. Նշանակեցէք գլխաւոր նաւահանգիստները:

Հրահանգ

Խօսքերն ամբողջացուցէք՝ կէտերուն տեղ գնելով պէտք եղած բա-
ռերը:

1. Մեր բնակած երկրագունքին չորս կողմերը կը կոչուին....
..,,, .. : — 2. կ'ըսուի այն կապոյտ գիծը որ
Երկինքը Երկրին կը կցէ: — 3. Գիւեթը . Երկինքին վրայ կը տեսնենք
փայլուն կէտեր որոնք կը կոչուին: — 4. կը կոչուի այն
գիծը որ Երկրին մակերեսը Երկու հաւասար մասի կը բաժնէ: — 5.

Կ. Պոլիս ունի քաղ, (Գրեցէ՛ք քաղերուն անունները): —
6. Վասփորի Ասիական եզերքի գեղերն են, իսկ Եւրոպական Ե-
զերքի գեղերն են : — 7. Պոլսոյ հին յիշատակարաններն են ...:

— 8. Պոլսոյ բնակիչներն են.... (Գրեցէ՛ք ազգերուն անունները): —
9. Տանկասանի մէջ կը խօսուին հետեւեալ լեզուները : — 10.

Պոլսոյ մէջ յիշատակելի են, իբրեւ առուսուրի կեդրոն, քաղերը:

Թ Ո Ւ Ա Բ Ա Ն Ո Ւ Թ Ի Ի Ն

1. ԴԱՍ. — ԲԱԺԱՆՈՒՄ (Շար.)

1. Երբ Բանորդին բուանշանը մեծ էլլէ. — 2968ը

բաժնենք 78ով: 7ը եթէ 29ի մէջ փնտռենք, կը տեսնենք որ 4 անգամ կայ, բայց 4 անգամ 78ը կ'ընէ 312 որ 298 Ա. Մասնական բաժանելէն աւելի մեծ է. ուրեմն 4ի տեղ 3 կը գրենք քանորդը և գործողութիւնը կը շարունակենք:

Ըսել է թէ, երբ Բանորդին մեկ բուանշանը մեծ ըլլայ, արտարեալը մասնական բաժանելիին չ'երկեր եւ այն ասէն 1 թիւ պակսեցնելու է Բանորդին:

1. — Ի՞նչպէս կը գիտնանք թէ Բանորդին բուանշանը մեծ է:

Վարժուքիւններ. 1-5. Բաժնենք 323796ը 132ով. 113894ը 341ով. 2634173ը 624ով. 2941212ը 525ով. 54238954ը 87968ով:

2. ԴԱՍ. — ԲԱԺԱՆՈՒՄ (Շար.)

2. Բաժնելու ամենապարզ կերպը. — 1. Աւելի արագ և աւելի պարզ կ'ըլլայ բաժանումը, եթէ մէկ կողմէ գտնուած քանորդով բաղմապատկենք բաժանարարը և արտադրեալը միշտ հաննք մասնական բաժանելիին:

2. Այսպէս. 2968ը 78ով բաժնած առնելիս, կ'ըսենք

2968 | 78
628 | 38
7ը 29ին մէջ կայ 3 անգամ. 3 անգամ 8' 24. 24ը 26էն 2. այս 2ը կը գրենք 6ին տակ. ձեռք կայ 2 (որովհետեւ 26էն հանեցինք). 3 անգամ 7ը, 21, 2 ալ ձեռք կայ 23. 23ը 29էն ելլէ, կը մնայ 6, 6ը կը գրենք, և յետոյ այս 62 առաջին մնա-

ցորդին քով կ'իջեցնենք բաժանելիի 8 թուանշանը. և կ'ըսենք 7ը 62ին մէջ կայ 8 անգամ. 8 անգամ 8' 64. 64ը 68էն ելլէ, կը մնայ 4. ձեռք' 6 (որովհետեւ 68էն հանեցինք). 8 անգամ 7ը 56. 6 ալ ձեռք' 62. 62ը 62էն 0: Ուրեմն 38 քանորդ և 4 մնացորդ:

2. — 1. Բաժնելու ամենէն արագ ձեւը ո՞րն է: 2. Նոյն լիւր պով բաժնեցէք 2968 թիւը 78ով:

Վարժուքիւններ. — 6-10. Նախորդ դասի բաժանումներն ըրէք, արագ ու պարզ գործողութեամբ:

3. ԴԱՍ. — ԲԱԺԱՆՈՒՄ (Շար.)

3. Թէ ե՞րբ պէ՞տ է Բանորդին մէջ 0 դնել. — 1. Բաժնենք 12873ը 42ով: Կը տեսնենք որ Բ. Մասնական բաժանելին 27ը աւելի փոքր է 42էն. այսինքն 42ը 27ին մէջ չկայ. ահա այն առնելիս այդ չկային տեղը, քանորդին մէջ կը գնենք 0 և բաժանելիին մըւս թիւը վար առնելով՝ գործողութիւնը կը շարունակենք:

2. Ուրեմն երբ մասնական բաժանելի մը բաժանարարէն աւելի փոքր ըլլայ, Բանորդին մեջ 0 կը դնենք եւ բաժանելիին միւս թիւը վար առնելով՝ գործողութիւնը կը շարունակենք:

3. — 1. Ի՞նչպէս կը բաժնուի 12873ը 42ով: 2. Երբ մասնական բաժանելին բաժանարարէն պզտիկ է, ի՞նչ կ'ընենք:

Վարժուքիւններ. — 11-18. Բաժնել 562536ը 936ով. 457689ը 653ով. 2007885ը 3999ով. 3896423ը 379ով. 9181429ը 274ով. 56054763ը 69872ով. 253697ը 417ով. 68236542ը 9876ով:

4. ԳԱՍ. — ԲԱԺԱՆՈՒՄ (Շար.)

4. Բաժանումին փորձը. — Բաժանումին փորձն ընելու համար պէտք է քանորդով բազմապատկել բաժանարարը. եթէ մնացորդ ալ կայ, այս արտադրեալին վրայ գումարել. այն ատեն կ'ելլէ բաժանելին և գործողութիւնը ուղիղ է:

Բաժանում	Փորձ
312.69 428	428 Բաժանարար
13 09 73	73 Քանորդ
0 25	<hr/>
	1284
	2996
	<hr/>
	31244
	25 Մնացորդ
	<hr/>
	31269 Բաժանելի

4. — Բաժանումին փորձը ի՞նչպէս կ'ընենք:

Վարժուիւններ. — 19—31. Նախորդ 28 էջի 1—5 վարժութեան հինգ բաժանումներու փորձերն ըրէք, յետոյ նախորդ դասի 11—18 եօթը բաժանումներու փորձերը:

5. ԳԱՍ. — ԲԱԺԱՆՈՒՄ (Շար.)

5. Մտաւոր բաժանում. — 1. Բաժանում 2ով. — Թիւ մը 2ով բաժնել, կը նշանակէ այն թիւին կէսը գտնել: Օրինակ. 4՝ ուղենք 40ի կէսը գտնել. յայտնի է որ 40ը կ'արժէ 4 հատ 10. 4 հատ տասնին կէսը կ'ընէ 2 տասն: 20: 4՝ ուղենք 88ին կէսը գտնել: 88 հաւասար է 80ի և կամ 8ի: 80ին կէսն է 40. 8ին կէսն է 4. ուրեմն 88ին կէսն է 40 առաւել 4 կամ 44:

2. Բաժանում 3ով. — Թիւ մը 3ով բաժնել, կը նշանակէ այն թիւին երրորդ մասը գտնել: Այսպէս, եթէ ուղենք 69ին երրորդ մասը գտնել, այսինքն 69ը 3ով

բաժնել, նախ կը գիտենք որ 69ը հաւասար է 60+9ի. 60ը 6 հատ 10՝ ունի. 6 հատ 10 երրորդ մասն է 2 հատ 10 կամ 20ի, 9ի երրորդ մասն է 3. ուրեմն 20+3=23. այս 23ը 69ին երրորդ մասն է:

3. Բաժանում 10ով. — Թիւ մը 10ով բաժնելու համար, հերիք է որ անոր աջ կողմի մէկ թուանշանը զատենք: Այս զատուած թուանշանը մնացորդն է: Այսպէս 4852ը 10ով բաժնելու համար, կը գրենք 485 քանորդ 2 մնացորդ:

4. Բաժանում 4ով. — Թիւ մը 4ով բաժնելու համար, նախ այն թիւին կէսը կը գտնենք, յետոյ ելածին ալ կէսը կը գտնենք:

5. — 1. Թիւ մը 2ով բաժնելը ի՞նչպէս կ'ըլլայ: — 2. Իսկ 3ո՞վ: — 3. Իսկ 10ո՞վ: — 4. Իսկ 4ո՞վ:

Վարժուիւններ. — 32—41. — Առանց գործողութիւն ընելու, սա թիւերը 2ով բաժնեցէք և քանորդները գտէք. 128. 224. 48. 146. 328. 66. 444. 4100. 6200. 8800: — 42—51. Առանց գերծողութիւն ընելու հետեւեալ թիւերը 3ով բաժնեցէք կամ անոնց երրորդ մասը գտէք, քանորդը գրելով. 33. 96. 210. 2100. 63. 630. 600. 6000. 660. 6600: — 52—61. Հետեւեալ թիւերը 10ով բաժնեցէք և քանորդն ու մնացորդը գրեցէք առանց գործողութիւն ընելու. 53. 524. 48. 487. 6328. 7350. 7356. 45200. 45270. 45274: — 62—73. Թիւերը 4ով բաժնեցէք և քանորդը գրեցէք առանց գործողութիւն կատարելու. 48. 480. 4800. 36. 368. 32. 320. 324. 28. 280. 284. 288: — 74. Երկու կտոր կերպաս գնեցինք, երկուսն ալ միեւնոյն տեսակէն, միեւնոյն արժէքով. առաջին կտորը կ'արժէ 103 դրուշ. երկրորդը 90. այդ երկրորդը առաջինէն 3 մեծր պակաս է. ուրեմն գտէք թէ առաջինը քանի և երկրորդը քանի մէծր երկար է. — 75. Տուն մը շինելու համար պէտք եղան 1500 աղիւս. 1000ը 85 դրուշէն և 4000 կովինար 1000ը 215 դրուշէն քանի դրուշ պիտի վճարեմ աղի սին և կովինարին համար: — 76. Կալուածատէր մը գնեց արտ մը, տուն մը և պարտէզ մը, արտին գինն էր 2510 դրուշ. տան գինը անկէ 6450 դրուշ աւելի, իսկ պարտէզին գինը արտէն 250 դրուշ պակաս. գտէք տանը և պարտէզին գինը:

6. ԳԱՍ. — ՏԱՄՆՈՐԳԱԿԱՆ ԹԻՒԵՐՈՒ ՍԱՀՄԱՆԸ

6. Տասնորդ, հարիւրորդ, հազարորդ. — 1. Եթէ ուզենք խնձոր մը տասը տղաքներու մէջ բաժնել հաւասար կերպով, ամէն մէկ տղուն բաժին կ'ընայ խնձորին տասը մասէն մէկը կամ մէկ տասնորդը:

2. Եթէ ամէն մէկ տղայ իր առած բաժինը 10 հաւասար մասերու բաժնէ, ըսել է թէ ամբողջ խնձորը 10 անգամ 10 կամ 100 հաւասար մասերու բաժնուած կ'ըլլայ, և այն ատեն այդ 100 մասերէն ամէն մէկը ամբողջ խնձորին մէկ հարիւրորդը կ'ըլլայ:

Այս կերպով դեռ կրնանք գտնել հազարորդը:

7. Միութիւնը տասնորդական մասեր ունի. — Տասնորդը, հարիւրորդը, հազարորդը կը կոչուին միութեան տասնորդական մասեր. որովհետեւ ասոնք միութեանէն փոքր են 10 անգամ, 100 անգամ, 1000 անգամ:

8. Տասնորդական կոտորակներ. — Երբ միութիւն մը տասնորդական ըրած ենք, այս տասնորդականէն քանի՞նք հատ որ առնենք, անոնք կը կոչուին տասնորդական կոտորակ. այսպէս + տասնորդը, 35 հարիւրորդը տասնորդական կոտորակ են:

9. Տասնորդական քիւեր. — Թիւ մը որ տասնորդական մասեր կը պարունակէ, կը կոչուի տասնորդական քիւեր. այսպէս 25 միութիւն և 5 տասնորդ երկուքը մէկտեղելու համար կը կազմեն որ միութեանէն մեծը: Իսկ 15 հարիւրորդը նոյնպէս տասնորդական թիւ մըն է որ միութեանէն փոքր է:

6. — 1. Երբ ուզենք առակայ մը 10 հաւասար մասի բաժնել, այդ մասերուն ամէն մէկն ի՞նչ կ'ընուի: 2 Առակայ մը ի՞նչպէս 100 հաւասար մասերու կը բաժնուի եւ ամէն մէկ մասը ի՞նչ կ'ընուի: 7. — Միութեան տասնորդական մասը ի՞նչ է: 8. — Ի՞նչ է տասնորդական կոտորակը: 9. — Ի՞նչ է տասնորդական քիւեր:

Վարձուքիւններ. — 77. Մարդ մը 3800 դր. կը վաստի տարին, սոր 534 դր. ընկերակարանին վարձը կուտայ. ինչ կը մնայ իրեն՝ ամասան ծախք ընկեր համար. — 78. Արարակապան մը բազար տարու և արհեստ 895 դր. գործին, 560 դր. գարի և 270 դր. յարգ. այդ ստանալով զինք ձի մը 1180 դր. և կով մը 450 դր. ի, ստակ մնաց իր բովը 95 և զրոյսի. — 79. Երեք հողի իրենց մէջ գումար մը բաժնեցին, այնքան որ առաջինն առաւ 620 դր., երկրորդը 40 դր. անկէ պակաս, իսկ երրորդը առաջինին և երկրորդին առածներուն կէսին չափ: Գտնելու է յարիւրորդը:

7. ԳԱՍ. — ՏԱՄՆՈՐԳԱԿԱՆ ԹԻՒԵՐԸ ԱՆՈՒԱՆԵԼ

10. Ի՞նչպէս կը ներկայացնենք տասնորդական քիւ մը.

1. Մենք արդէն գիտենք թէ ամբողջ թիւի մը մէջ, կողմը դրուած թիւերը միշտ 10 անգամ աւելի զախիկ են իրենց ձախ կողմը թիւերէն:

2. Այս կանոնը տասնորդական թիւերուն ալ կը յարարի. այսպէս՝ ամբողջ թիւի մը ալ կողմի միւս կողմէն կողմը առաջին թիւը տասնորդ է, երկրորդ թիւը երրորդը և այսպէս շարունակ:

3. Բայց թիւի մը մէջ տասնորդականներն ու ամբողջ թիւերը ձանձաղու համար, դանձաբարձ կը գտանք ստորակիցով մը: Այսպէս, 5,7345 թիւին մէջ, 5ը ամբողջ միւս կողմէն կը ցուցնէ, իսկ 7ը տասնորդ, 3ը հարիւրորդ, 4ը հազարորդ և 5ը տասը հազարորդ:

11. Ամբողջ մաս եւ տասնորդական մաս. — 1. Տասնորդական թիւի մը մէջ, ոտորակէտին ձախ կողմը դրուած թիւը անբողջ մասն է, ալ կողմ դասուածը տասնորդական մասն է: Այսպէս 85,24 թիւին մէջ 85ը ամբողջ մասն է, 24ը տասնորդական մասը:

ՆՈՐ ԴՊՐՈՑ, Է. ՊԵՂ

Կանոնային թիւ
Միութիւն
Տասնորդ
Հարիւրորդ
Հազարորդ
5, 7 3 4 5

2. Ստորակէտին աջ կողմը դանուած թիւերը կ'ը
ուին սասնորդական քիւեր կամ պարզապէս սասնորդ
կան :

12. Տասնորդական քիւ մը ի՞նչպէս կարդալու է .

Տասնորդական թիւ մը կարդալու համար նախ կը կա
դանք ամբողջ թիւը , յետոյ անոր քովի տասնորդակ
նը կը կարդանք ամբողջ թիւի պէս , բայց վերջին տա
նորդականը քանի՞երորդ որ է , անոր անունը կուտան .
Այսպէս , 45,54ը կը կարդանք՝ 45 ամբողջ 54 հարի
րորդ . կամ 5,762ը կը կարդանք՝ 5 ամբողջ 762 հաղ
րորդ . կամ 215,6215ը՝ 215 ամբողջ 6215 տասը հաղ
րորդ :

10. — 1. Ամբողջական քիւերու մէջ աջ կողմը դրուած քիւ ը
կը ցուցնէ : 2. Իսկ սասնորդական քիւի մը մէջ միաւորէն ետք ե
տաւջին քիւը ի՞նչ է : 3. Տասնորդական քիւի մը մէջ ամբողջա
քիւերը ի՞նչպէս կ'որոշենք : — **11.** — 1. Ստրակէտին աջ կը
քիւը ի՞նչ կ'ըսուի : Իսկ ձախ կողմի քիւը : 2. Տասնորդա
մասին բուանեանները ի՞նչ կը կոչուին : — **12.** — Տասնորդա
քիւ մը կարդալու կանոնը ո՞րն է :

8. ԳԱՍ. — ՏԱՍԵՈՐԴԱԿԱՆ ԹԻԻԵՐԸ ԱՆՈՒԱՆԵԼ (Շար.)

13. Ի՞նչպէս գրելու է սասնորդական քիւ մը .

Տասնորդական քիւ մը գրելու համար , ձախ կողմէն յ
գրելու ե անբողջ քիւը , յետոյ դնելու ե ստորակէտը , յ
գրելու ե սասնորդականը :

Այսպէս , երբ կ'ըսուի 38 ամբողջ 425 հազար
կը գրուի 38,425 :

2. Եթէ թիւին անունը տրուած ժամանակ , ամբ
թիւ չգտնուի , անոր տեղ , ստորակէտէն առաջ գեր
զնելու է : Այսպէս , եթէ ըսենք 25 հարիւրերորդ ,

գրուի 0,25 . եթէ ըսենք 2465 տասը հազարորդ , կը
գրուի 0,2465 :

3. Պէտք է լաւ ուշադիր ըլլալ որ տասնորդականին
վերջին թիւը իր կարգը պահէ . այսպէս , եթէ ըսենք 5
ամբողջ 14 հազարորդ ե գրենք 5,14 , սխալ է՝ որով
հետեւ հոս 14ը հարիւրորդ է . պէտք է գրել 5,014 հա
զարորդ . կամ՝ երբ ըսենք 15 ամբողջ 6 տասը հազա
րորդ , պէտք է 6ը իր տեղը գրել , այսինքն 4րդ թուա
նշան ըլլալու է , այսպէս , 15,0006 :

13. — 1. Ի՞նչպէս կը գրուի սասնորդական քիւ մը : 2. Եթէ ամ
բողջ քիւ չըլլայ . ճեղք ի՞նչ կը դուռի : 3. Տասնորդական քիւ մը
գրելու համար ի՞նչ բանի ուշադիր ըլլալու է :

9. ԳԱՍ. — ՏԱՍԵՈՐԴԱԿԱՆ ԹԻԻԵՐԸ ԱՆՈՒԱՆԵԼ (Շար.)

14. Տասնորդական քիւի մը աջ կողմը գերօներ աւել
ցրենի կամ ջնջել . — 1. Սա թիւերը 3,25 ե 3,250 իրա
րու հաւասար են , միայն թէ առաջինը 25 հարիւրորդ ,
իսկ երկրորդը 250 հազարորդ կը կարդանք . կամ 6,37
ե 6,37000 միլիոնոյն արժէքն ունին , միայն թէ երկ
րորդը կը կարդացուի 37 հարիւր հազարորդ : Այսպէս ,
կրնանք սասնորդականի մը աջ կողմը մեր ուզածին չափ
գերօ աւելցնել , առանց սասնորդականին արժեքը փոխելու :

2. Բանի որ տասնորդականին աջ կողմը գերօներ
աւելցնելով՝ անոր արժէքը չի փոխուիր , նոյնպէս ա
նոր աջ կողմէն գերօներ ջնջելով՝ արժէքը չի փոխուիր :
Հետեւաբար կրնանք սասնորդականի մը աջ կողմը գր
նուած գերօները ջնջել , առանց սասնորդականին արժեքը
փոխելու :

14. — 1. Ի՞նչ սարքերու քիւն ունին 3.25 եւ 3.250 քիւերը : 2.
Տասնորդականի մը աջ կողմը գերօներ աւելցնելով կամ ջնջնել , անոր
արժեքը կը փոխուի :

10. ԳԱՍ. — ՏԱՍՆՈՐԳԱԿԱՆ ԹԻԻԵՐԸ ԱՆՈՒԱՆԵԼ (Շար.)

15. Ի՞նչպէս կրնանք ճանաչողական մը 10ով, 100ով, 1000ով, եւն. մեծցնել. — 1. Եթէ ուզենք 25,43ը 10 անգամ մեծցնել, պէտք է որ ստորակէտը մէկ թիւ դէպի աջ կողմը բերենք, այսպէս 254,3: Ուրեմն կրնանք գրել 25,43x10=254,3. և իրօք, առաջին թիւին մէջ ստորակէտին ձախ կողմը գտնուած 5ը միաւոր է, և կ'արժէ 5 միւլթիւն, իսկ երկրորդ թիւին մէջ տասնաւոր է և կ'արժէ 50. նոյնպէս 4ը, որ առաջինին մէջ ստորակէտին ձախ կողմը կը գտնուի, կ'արժէ 4 տասնորդ, իսկ երկրորդին մէջ միաւոր կարգն է և կ'արժէ 4 ամբողջ

2. Ուրեմն, յայտնի է որ տասնորդական թիւ մը 10ով, 100ով, 1000ով եւն. բազմապատկելու համար պէտք է ստորակէտը դէպի աջ կողմը տանինք՝ մէկ թիւ երկու թիւ, երեք թիւ, եւ այլն. այսինքն զերօններու չափ:

3. Եթէ տասնորդական թուանշանները քիչ ըլլան անոնց աջ կողմը կրնանք զերօններ աւելցնել. արդէ յայտնի է որ այս զերօնները բնաւ անոր արժէքը չեն փոխեր: Այսպէս, եթէ ուզենք 2,5ը 100ով բազմապատկել նախ կրնանք գրել 2,50 որ հաւասար է 2,5ի. յետո՞ ստորակէտը աջ կողմը տանելով երկու թիւ՝ կը գրենք 250

16. Ի՞նչպէս կրնանք ճանաչողական թիւ մը 10ով, 100ով, 1000ով, եւն. փոքրցնել. — Մեծցնելու համար ստորակէտը դէպի աջ կողմը տարինք, պզտիկցնելու համար դէպի ձախ կը տանինք: Այսպէս, 46,53ը տասնգամ պզտիկցնելու համար, գրելու է 4,653: Եթէ ձախ կողմը թիւերը պակասն, զերօններ աւելցնելու է: Այսպէս, 3,56ը եթէ 100 անգամ ուզենք փոքրցնել, նախ ստորակէտը երկու թիւ դէպի ձախ տանելու է. բազմապատկելու համար, գրելու է 356:

մէկ թիւ կայ, ուրեմն դերօ մ'ալ կ'աւելցնենք. այսպէս, 0,356 կամ 0,0356:

15. — 1. Տասնորդական թիւ մը 10 անգամ ի՞նչպէս կրնանք մեծցնել: 2. Ի՞նչպէս կրնանք մեծցնել 100 անգամ, 1000 անգամ, եւ այլն: 3. Երբ մեծցնելիք բուսեցանք պէտք եղածին չափ ճանաչողականներ չունենայ՝ ստորակէտը առ աջացնելու համար՝ ի՞նչ ընելու է: — 16. — Տասնորդական թիւ մը 10 կամ 100 կամ 1000 անգամ պզտիկցնելու կերպը ո՞րն է:

11. ԳԱՍ. — ՏԱՍՆՈՐԳԱԿԱՆ ԹԻԻԵՐՈՒ ԳՈՒՄԱՐՈՒՄԸ

13. Տասնորդական թիւերը գումարել. — Տասնորդական թիւերն ալ անբողջ թիւերու պէս կը գումարուին:

5,237	45,5
3,428	127,38
6,248	6,412
14,913	179,292

Շատ դիւրին է դանտնք իրարու տակ գրել, միայն՝ ուշադիր ըլլալու է որ ստորակէտներն իրարու տակ գան և յետոյ ամբողջ թիւերու միաւորներն իրարու տակ, և տասնորդական թիւերու տասնաւորներն ալ իրարու տակ: Վերի թիւը կըրոյս վարինէն աւելի շատ տասնորդական ունենալ, կամ պակաս ունենալ, աս նշանակութիւն չունի: Այսպէս 25ը 35ից քիչ յետոյ, գումարելու է, միայն թէ երբ ստորակէտին տեղը հասնիք, ստորակէտը իր տեղը դրէք:

17. — Տասնորդական թիւերն ի՞նչպէս գումարելու է:

12. ԳԱՍ. — ՏԱՍՆՈՐԳԱԿԱՆ ԹԻԻԵՐՈՒ ԳՈՒՄԱՐՈՒՄԸ (Շար.)

18. Փորձ. — Տասնորդական թիւերու մէջ գումարումը փորձը, ամբողջ թիւերու նման է: Փոխանակ

վերէն վար գումարելու, փորձի համար վարէն վեր կը գումարենք, պէտք է որ միեւնոյն գումարն ելլէ :

18. — Տասնորդական թիւերու գումարումին փորձը ի՞նչպէս կ'ըլլայ :

Վարժութիւններ. — 80—90. Գրով գրեցէք սա թիւերը 0,7, 0,14, 1,28, 23,42, 0,07, 0,0007, 45,179, 0 004, ,00015, 0.00008, 4,396. — 91—112. Սա նախորդ թիւերը նախ 100 անգամ մեծցուցէք, յետոյ միեւնոյն թիւերը 10 անգամ փոքրացցէք, — 113—118. Թուանշանով գրեցէք. Վեց ամբողջ բառաւորներէն յարիւրորդը: Երեսունը վեց ամբողջ եօթանասունընկէ հարիւրորդը: Հարիւր երեսունըջոր ամբողջ եօթանասունընկէ հարիւրորդը: Երկու հազար հարիւր բառաւորներէն ամբողջ ինը հարիւր վեց հազարորդը: Երկու ամբողջ ութը հազարորդը: Վեց տասն հազարորդը, ինը հարիւր հազարորդը: — 119—122. Հետեւեալ գումարներն ըրէք՝ իրենց փորձերովը մէկտեղ. 54,75+321+42+1, +0,482+578,2: 3+5,7+243,9+0,057+238,25+0,07,2,0005,7, +8,56+32,484+0,7005+47,80+17,17, 0,03+0,05+0,4+0,00 +0,279+0,009.

13. ԴԱՍ. — ՏԱՄՆՈՐԳԱԿԱՆ ԹԻԻԵՐՈՒ ՀԱՆՈՒՄԸ

19. Տասնորդական թիւերն իրարմէ հանել. — Տասնորդական թիւերն իրարմէ հանելու ե ճիշտ անբողջ թիւերու պես: Ատոր համար, փոքր թիւը մեծին տակ գրելու է, այնպէս որ ստորագէտներն իրարու տակ դան. յետոյ ամբողջ թիւերու պէս հանելու է, տարբերութիւնը գտնելէ յետոյ ստորակէտը ճիշտ իր սիւնակին տակ դնելու է:

19. — Տասնորդական թիւերուն հանումը ի՞նչպէս կ'ընէք :

Վարժութիւններ. — 123—128. Հանեցէք իրարմէ. 2,07,33էն, 0,35ը 0,63էն, 1.045ը 6,307էն, 2,006ը 4,705էն, 0.079ը 0,8956էն, 5,273ը 8,002էն.

14. ԴԱՍ. — ՏԱՄՆՈՐԳԱԿԱՆ ԹԻԻԵՐՈՒ ՀԱՆՈՒՄԸ (Շար.)

20. Երբ թիւերէն մէկը միւսէն պակաս տասնորդական

ուրիշ. — Կրնայ ըլլալ որ մեծ թիւը փոքրէն կամ փոքր

թիւը մեծէն պակաս տասնորդական ունենայ.

— այն առնելու պակաս ունեցողին աջ կողմը պէտք եղածին չափ դերօ կրնանք աւելցնել:

Յայտնի է որ այս զերծները տասնորդական թիւերու արժէքը չեն փոխեր:

Այսպէս 46,75ն կ'ուզենք հանել 27,432ը:

Մեծ թիւին տասնորդականին աջ կողմը երկու

զերօ կ'աւելցնենք և գործողութիւնը կը տարբերնք:

Կամ 46,732էն հանել 27,4ը: Այս վերջինին աջ կողմը կ'աւելցնենք երկու զերօ:

20. Ի՞նչ ընելու է երբ թիւերէն մէկը միւսէն պակաս տասնորդական ունի:

Վարժութիւններ. — 129—137. Իրարմէ հանել. 79,287ը 8,35էն, 0,8007ը 0,938էն, 0,00567ը 0 006էն, 0,999ը 9,9էն, 5,68ը 7էն, 5,68ը 6էն, 0,234ը 3էն, 0,428ը 1էն, 0,009ը 0.09էն.

15. ԴԱՍ. — ՏԱՄՆՈՐԳԱԿԱՆ ԹԻԻԵՐՈՒ ՀԱՆՈՒՄԸ (Շար.)

21. Փորձ. — Հանումի մէջ ալ, սասնորդական թիւերն փորձը ճիշտ անբողջ թիւերու պես է: Հերիք է որ փոքր թիւը և տարբերութիւնը իրարու տակ գրէք և ումարէք՝ կ'ելլէ մեծ թիւը:

Փորձ

Հանում

27,432 Փոքր թիւ 46,700 Մեծ թիւ

19,268 Տարբերութիւն 27,432 Փոքր թիւ

46,700 Մեծ թիւ 19,268 Տարբերութիւն

21. — Տասնորդական քիւերու բարձոււից փորձը ի՞նչպէս կ'ընեն:

Վարձուքիւններ. — 138—152. Նախորդ երկու դասերու մէջ գտնուած տասներեկ հատ հանումներու փորձերն ըրէք:

16. ԴԱՍ. — ՏԱՍՆՈՐԴԱԿԱՆ ԹԻԵՐՈՒ ԲԱԶՄԱՊԱՏԿՈՒԹԻՒՆԸ

22. Տասնորդական քիւերն իրարու հետ բազմապատկելի. — Ճիշտ ամբողջ քիւերու պէս իրարու հետ կը բազմապատկենք սասնորդական քիւերն ալ, առանց ստորակէտի ուշադրութիւն ընելու: Բայց արտադրեալը գտնելէ յետոյ, անոր աջ կողմէն զատելու է այնքան տասնորդական, որքան որ գտնուի՝ թէ՛ բազմապատկողին թէ՛ բազմապատկելիին մէջ:

Առաջին օրինակ. — 15,37ը կ'ուզենք 5ով բազմապատկել. կը գրենք այնպէս մը որ 5ը 1 ամբողջին միւսը 5ին տակը գայ, յետոյ կը բազմապատկենք և 7685 արտադրեալին աջ կողմէն երկու թիւ կը զատենք որովհետեւ բազմապատկելիին մէջ երկու տասնորդական կայ:

22. Ի՞նչպէս կ'ընեն ցասնորդական քիւերու բազմապատկելիքը:

Վարձուքիւններ. — 153—165. Բազմապատկել. 2,78ը 4ով, 4,57ը 7ով, 4,783ը 6ով, 0,38ը 7ով, 0,456ը 7ով, 4,56ը 6ով, 4,56ը 7ով, 0,785ը 9ով, 0,034ը 8ով, 0,5ը 9ով, 0,05ը 9ով, 0,005ը 9ով, 0,0005ը 9ով. — 166. Գուրպայ գործող կին մը 9 երկուսանեակ գուրպայ կը ծախէ 540 դրշ. և կը վաստկի ամէն մէկ գոյցին 2 դրշ.: Քանի՞ դրշ. նստու էր իր վրայ ամէն մէկ գոյցը:

17. ԴԱՍ. — ՏԱՍՆՈՐԴԱԿԱՆՆԵՐՈՒ ԲԱԶՄԱՊԱՏԿՈՒԹԻՒՆԸ (Շար.)

23. Տասնորդականներ բազմապատկելի. — Երկուրդ օրինակ. — Հիմա բազմապատկելու է 43,725 օրինակ. — 43,725ը 6,43ով: Ինչպէս կը տեսնէք, բազմապատկելին ունի երեք տասնորդական, իսկ բազմապատկողը երկու հատ: Ուրեմն արտադրեալին մէջէն ստորակէտով զատելու է հինգ հատ տասնորդական: Արտադրեալն է 281,15175:

23. — Բազմապատկեցէ՛ք 43,725ը 6,43ով:

Վարձուքիւններ. — 167—187. Բազմապատկել. 8,4ը 72ով, 17,28ը 65ով, 14,3ը 7,8ով, 174,5ը 3,7ով, 29,37ը 17,89ով, 23,785ը 7,9ով, 8,543ը 52,67ով, 0,528ը 1,38ով, 0,056ը 0,7ով, 0,0,748ը 0,09ով, 0,7ը 0,9ով, 0,07ը 0,9ով, 0,007ը 0,9ով, 0,007ը 0,09ով, 0,007ը 0,009ով, 0,003ը 0,03ով, 0,06ը 0,03ով, 0,6ը 0,0003ով, 0,01ը 0,01ով, 0,001ը 0,001ով, 0,7ը 0,7ով


18. ԴԱՍ. — ՏԱՍՆՈՐԴԱԿԱՆՆԵՐՈՒ ԲԱԶՄԱՊԱՏԿՈՒԹԻՒՆԸ (Շր.)

24. Փորձ. — Տասնորդական քիւերու բազմապատկութեան փորձը ամբողջ քիւերու պէս է: Պէտք է արտադրիչներուն կարգը փոխել, այսինքն բազմապատկողը բազմապատկելի և բազմապատկելին բազմապատկող ընել, յետոյ գործողութիւնը կատարել: Պէտք է որ միեւնոյն արտադրեալը տայ:

24. — Տասնորդական քիւերուն բազմապատկութեան փորձը ի՞նչպէս կ'ըլլայ:

Վարձուքիւններ. — 188—221. Նախորդ երկու դասերուն բոլոր փորձերն ըրէք. — 222. Օղը 770 անգամ պակաս կը կշէք բան ջուրը. իսկ սեղիկը 13,59 անգամ աւելի կը կշէք բան ջուրը. կրնա՞ք գտնել թէ

սեղիկը բանի անդամ աւելի կը կշռէ քան օղը. — 223. Վաճառական մը 104 մէր կերպաս գնեց, մէթըրը 9 զրշ.ի և ուրիշ կերպասէ մ'ալ 215 մէթր գնեց, մէթըրը 7 զրշ.ի. երկու կտորն ալ ծախեց և քնդամէնը շահեցաւ 477 զրշ. — կրնա՞ք ըսել թէ վաճառականը բանի զրշ.ի ծախեց աս երկու կտոր կերպասը:



19. ԴԱՍ. — ԵՅԹՆԵՐՈՐԴ ԱՄՍՈՒԱՆ ԱՄՓՈՓՈՒՄ (1—5)

1—5. Ամբողջ քիւեռու բաժանումը. եթէ բաժանումը ըրած ատ'անիս քանորդին մէջ մեծ թիւ մը ղենեք, քանորդին ու բաժանարարին արտադրեալը մասնական բաժանելիէն չ'ելլեր: Այն ատեն քանորդէն 1 պակսեցնելու է:

Բաժանումը արագ ու պարզ կ'ըլլայ, եթէ մարդ վարժութիւն ընէ՝ քանորդին ամէն մէկ թուանշանը գտնելուն պէս, բազմապատկել բաժանարարը և անմիջապէս՝ առանց գրելու՝ նկատչեալէ հանել մասնական բաժանարարէն:

Կրնայ ըլլալ որ մասնական բաժանելի մը աւելի փոքր դայ բաժանարարէն, այն ատեն քանորդին մէջ պէտք է ղենել զերօ մը, յետոյ բաժանելիէն նոր թիւ մը վար առն'ել և գործողութիւնը շարունակել:

Բաժանումին փորձը կ'ըլլայ եթէ քանորդով բազմապատկենք բաժանարարը և մնացորդը ելածին վրայ գումարենք: Պէտք է այն ատեն բաժանելին ելլէ:



20. ԴԱՍ. — ԱՄՓՈՓՈՒՄ ԵՅԹՆԵՐՈՐԴ ԱՄՍՈՒԱՆ (6—18)

6—16. Տասնորդական քիւեռն անուտնել. — Տասնորդը, հարիւրորդը, հազարորդը, ևն. միութեան (այսինքն մէկին) տասնորդական մասերն են:

Երբ միութիւն մը տասը հաւասար մասերու բաժնելէ յետոյ, անոր մէկ կամ մէկ քանի մասերը առնենք,

այս մասերը չասնորդական կոտորակ կ'ըսուին:

Թիւ մը որ տասնորդական մասեր կը պարունակէ, չասնորդական քիւ կ'ըսուի:

Տասնորդական թիւի մը մէջ, ստորակէտին աջ կողմի առաջին թիւը կը ցուցնէ տասնորդները, երկրորդ թիւը կը ցուցնէ հարիւրորդները, յետոյ հազարորդները, տասը հազարորդները և այսպէս կարգով:

Տասնորդական թիւ մը կարդալու համար, նախ ամբողջ մասը արտասանելու է, յետոյ տասնորդական մասը կարդալու է ամբողջ թիւի մը պէս. բայց վերջին թիւը քանիերորդ որ է, անունը այնպէս տալու է:

Տասնորդական թիւի մը արժէքն ամենեւին չի փոխուի, եթէ անոր աջ կողմը զերօներ աւելցնենք, կամ գտնուած զերօները ջնջենք:

Տասնորդական թիւ մը 10ով, 100ով, 1000ով, ևն. մեծցուցած կամ պզտիկցուցած կ'ըլլանք, եթէ ստորակէտը զերօներուն չափ դէպի աջ կողմը տանինք, կամ դէպի ձախ կողմը բերենք:

17—24. Տասնորդական քիւեռը հաշուել. — Տասնորդականներու գումարումն ալ հանումն ալ ճիշդ ամբողջ թիւերու պէս է: Միայն թէ գումարը կամ տարբերութիւնը գտնելէ յետոյ, պէտք է ստորակէտի սիւնակին տակ ստորակէտ մը ղենել, այսինքն՝ տասնորդական թիւերն ամբողջ թիւերէն զատել:

Տասնորդականներու բազմապատկութիւնն ալ ամբողջ թիւերու նման է: Բազմապատկելու է երկու արտադրիչները, առանց ստորակէտին ուշադրութիւն ընելու: Բայց արտադրեալը գտնելէ յետոյ, համընդ է թէ երկու արտադրիչներուն մէջ քանի՞ հատ տասնորդական կայ, և այնքան տասնորդական արտադրեալին աջ կողմէն զատելու է:


ՆԱԽՆԱԿԱՆ ԳԻՏՈՒԹԻՒՆՆԵՐ

ԳԱՍ. 1. — ՉԱՆՈՋԱՆ ԿԵՆԳԱՆԻՆԵՐ

1. Ոսկոր ունեցող կամ ողնաւոր կենդանիներ. — 1. Հարկաւ տեսած էք որ, երբ հաւի վառեկ մը կը մորթեն, կը փետտեն ու եփելէ յետոյ միւր վրայէն կ'առնեն, կը մնայ ստկորները: Սա 48 պատկերը կը ցուցնէ վառեկի մը ամբողջ ոսկորները: Կատուն (Պատկ. 49) և շունը նոյնպէս ոսկորներ ունին:



Պատկ. 48



Պատկ. 49

Վառեկի մը ամբողջ ոսկորները:

Կատուի մը ամբողջ ոսկորները:

Ասոր համար կ'ըսենք թէ վառեկը, կատուն, շունը ոսկոր ունեցող կենդանիներ են:

2. Ինտեղէք վառեկին ոսկորները, անոնց մէջ քանի մը հատեր կան որ իրարու ետեւէ շարուած են՝ վիզին, մէջքին ու պոչին վրայ (Պատկ. 48. Ո. Ո. Ո.): Այս պղզտիկ ոսկորներուն անունն է ողն: Ասոնք ամէնքը իրարու միանալով կը կազմեն ողնայարը, ինչպէս տեսանք մարդու ոսկորներուն մէջ (Ա. Պրակ, 73 էջ, Յրդ դաս.): Նոյնպէս կատուն շատ մը ողներ ունի: Չեռքերնիդ


դրէք կատուի մը մէջքին վրայ ու շփեցէք զայն, յայտնի կը տեսնէք անոր ոսկորիկները (Պատկ. 49, Ո. Ո. Ո.):

3. Այն բոլոր կենդանիները որ վառեկին ու կատուին պէս ոսկորներ ունին, անպատճառ ողնայար ալ ունին: Ասոնց կ'ըսուի ոսկոր ունեցող կամ ողնաւոր կենդանիներ: — Օրինակ. Շուն, օձ, ծածան (ձուկ), ծիծեռնակ, եւն:

1. — 1. Վառեկը, կատուն ոսկոր ունի՞ն: 2. Աս կենդանիները ողնաւոր ունի՞ն: 3. Ոսկոր ունեցող կենդանիներ ի՞նչ կը կոչուին: Օրինակներ տուէ՛ք ողնաւոր կենդանիներու:

2. ԳԱՍ. — ՉԱՆՈՋԱՆ ԿԵՆԳԱՆԻՆԵՐ (Շար.)

2. Ողնաւոր կենդանիներու աղեւալ սեռակներ. — Ոսկոր ունեցող այն կենդանիները որոնց մարմինը մնազերով ծածկուած է ինչպէս կատուն, շունը՝ Սեղաւոր կենդանի կ'ըսուին, որովհետեւ ասիւմ (ծիծ) ունին:



Պատկ. 50-53

Անոյնայար կենդանիներու ցնդներ, Խ. Խզուց, ԽԶ. Խեչափառ, Ե. երկեմայր, Ս. մովրզի կամ եփնուս:

Այն ստնաւոր կենդանիները, որոնց մարմինը փետտուրով ծածկուած է, քոչուռ կ'ըսուին. ինչպէս ծիծեռնակ, բու, ազուս:

Կան ուրիշ ողնաւոր կենդանիներ ալ, որ մ'չ մազ ու-

ներն ո՛չ փետուր, և սողալով կը քալեն, ասոնց կ'ըստս սողոտն. ինչպէս, մողէս, իժ :

Իսկ այն ոսկորաւոր կենդանիները որոնց մարմինը քերկերով ծածկուած է և որոնք միշտ ջուրի մէջ կ'ապրին՝ ինչպէս մորիւ, տարեխ, ծածան՝ կը կոչուին ձուկ :

3. Ոսկոր չունեցող կամ անողնայար կենդանիներ. —

Դիտած էք արդեօք խղուռջ մը կամ խեչափառ մը (Պատկ. 50—53 խ. ԽԶ.) : Ասոնց մարմինը շատ փափուկ է և ներսէն ոսկոր չունի, բայց դուրսէն երկուքն ալ կարծր պատեան ունին, ասոնց ոսկորը դուրսէն է :

Բայց երկրմայր մը (Պատկ. 50. Ե.) ո՛չ դուրսէն ո՛ր ներսէն ոսկոր ունի. ծովողնի կամ եքլիտոսը որ, ծովուն մէջ կ'ապրի, կը որ ու փշոտ կարծր պատեան մը ունի դուրսէն, բայց ճանճ մը ո՛չ դուրսէն ո՛չ ներսէն ո՛րեւէ կարծր բան չունի :

Ուրեմն խղուռջ մը, խեչափառ մը, երկրմայր մը եքլիտոս կամ ծովողնի մը, ճանճ մը, եւն. անոսկոր կամ անողնայար կենդանիներ են :

2. — Սնաւոր կենդանիներու օրինակներ տուէք. քոչուներու սողուններու, ձուկերու անուններ ալ րտէք : — 3. — Խղուռջին, խեչափառին, երկրմայրին եւ ծովողնիին կամ եքլիտոսին ներսի ու դուրս կողմը ի՞նչ կայ : Ոսկրաւոր կամ ողնաւոր են աս կենդանիները ի՞նչ րտել է անողնայար :

3. ԴԱՍ. — ԸՆՏԱՆԻ ԿԵՆԴԱՆԻՆԵՐ

4. ԸՆՏԱՆԻ ԿԵՆԴԱՆԻՆԵՐ. — Այն կենդանիները որ սովորաբար տան մէջ կ'ապրին ու մարդու ձեռքով կը խնամուին՝ ինչպէս կովը, ոչխարը, եզը, շունը, ձիւն կը կոչուին ընտանի կենդանի :

5. Կով, Ս.ՅԺ. 1. Կովն ու այծը ընտանի կենդանիներ են որ կար կուտան :



Պատկ. 54

Կովը կը կրեն գովին մէջ, անոր կարն առնելու համար :

2. Կովերը, այծերը, ոչխարները սովորաբար (ամառ և գարուն) չեն թողուր դաշտին մէջ, տեղ մը կը հաւաքեն զանոնք, գոմին մէջ : Ու ամէն իրիկու նախիրը աղմուկով գիւղէն ներս կը մտնէ և ամէն կենդանի կը ջոկուի իր տիրոջ տունը կ'երթայ :

Հոն՝ տանը մէջ՝ տանտիրիները կը կթեն զանոնք (Պատ. 54), և առտուանց, արօտավայրը զրկած ժամանակին, նոյնպէս կը կթեն :

Կարթէն կը պատրաստեն մածուց, սեր, կարագ :

4. — Ի՞նչ րտել է ընտանի կենդանի : — 5. — 1. Ընտանի կենդանիներէն ո՞ր տեսակներ կար կուտան : 2. Սովորաբար ե՞րբ կը կրեն կովերն ու այծերը : Կարով ի՞նչ կը շինուի :

4. ԴԱՍ. — ԸՆՏԱՆԻ ԿԵՆԴԱՆԻՆԵՐ (Շար.) —

6. Ձի, էջ, եգ, շուն. կասու. — 1. Ձիև կը գործածուի կառքեր քաշելու և բեռներ կրելու համար, բայց շատ մը երկիրներ, ուր երկրագործութիւնը շատ առաջ գացած է, ձիերը արօրին կը լծեն: Էջը թէեւ քիչ մը փոքր բայց ձյուն ըրածները ինքն ալ կ'ընէ:

2. Եզը նոյնպէս կը գործածուի հողը հերկելու, բեռներ կրել տալու և սայլեր քաշելու համար: Ասկէ զատ մատղաջ եզները, որոնց հորթ կ'ըսեն, կը պահեն, կը քիչցնեն մորթելու համար:

3. Շունը մեզի օգտակար է. կայ որսի շուն (բարակ կամ քերծէ), կայ պահապան շուն (գամիտ), հովիտի շուն: Կասուն մէկ օգուտ ունի, այն է մուկ բռնել:



Պատկ. 55

Բակին մէջ հատեն ու թռչուններ կուզան ու սէլ իրենց կեր կամ կուտ:

7. Հաւնոցի թռչուններ. — Հաւնոցին մէջ սիրուն

պղտիկ թռչուններ կան, ինչպէս հաւը որ հաւկիթ կ'առնէ, աղանիւներ, սաղեր, բաղեր և հնդկահաւեր: Պատկ. 55):

6. — 1. Ի՞նչ բանի կը գործածուի ձին: Էջը: 2. Եզը: 3. Շունը: Կասուն: 7. — Հաւնոցի թռչուններ ըսէք:

5. ԴԱՍ. — ՄԵՂՈՒ

8. Փերակը. — Տեսած էք արդեօք մեղուի փերակներ գլուղի մը պարտէզներուն մէջ: Անոնք տեղ տեղ ողէ շինուած են, տեղ տեղ ալ փայտէ կամ յարդէ: Բեղուններն անոնց մէջ կը բնակին: Գարնան գեղեցիկ



Պատկ. 56

Յարդէ փերակներէն մեղր կը հանեն:

սրեւտա օր մը գացէք հոն ու պլոտի տեսնէք թէ մեղուները ի՞նչ եռանդով կ'աշխատին: Մեղուններէն ոմանք լը թռին կ'երթան ծաղիկներէն հիւթ ժողվելու, ուրիշները Գարն, Է. Պրակ

ներ արդէն մեզը ունին և կը բերեն կը լեցնեն մոմէ շի
ուած մեզրահայն կամ խորխորին մէջ :

9. Մեղրը. — Սովորական փեթակները զանգա
ձեւով կողովի կը նմանին (Պատկ. 56) : Ասոնց մէջ իջընեն թթենի տերեւներ : Շերամին համար մեծ մեծ
ըխտներ կան : Այս մեղախորխորները ժողվելու համար
մուխ կը փչեն փեթակներուն մէջ որ մեղուները թմր
ու չկրնան կծել : Մեղրը շատ առողջարար ուտելիք է
շաքարի տեղ կը բռնէ :

8. — Ի՞նչ կ'ընեն մեղուները՝ փեթակէն ելլելով ու նորէն
մտնելով : 9. — Ի՞նչ կ'ընեն մեղրի խորխոր փեթակէն հանել
համար :

6. ԳՈՍ. — ՇԵՐԱՄ


10. Շերամը. — Շերամը պզտիկ թրթուր մ
(4, Պատկ. 57) : Անկէ առաջ կուգայ թիթեւնիկ մը (Պատ



Պատկ. 57—63
Շերամի որդին մեծնալը :
1. Հաւկիք : 2. 3. 4. 5.
բրբուր : 6. — Հաւկիք խո
ւորցած : 7. — Շերամը
խոտը :

65), նախ շերամը պզտուիկ հա
կիթէ (1, Պատկ. 57. մեծցած
մէջ) մը կ'ելլէ և կ'ըլլայ թրթու
յետոյ այս թրթուրը կը խոշորն
և շատ անգամներ կը փոխէ
ձեւը (Պատկ. 57—63), և աս
նէն վերջը բոժոժի մը մէջ կը մն
ու ներսէն թեղ կը հիւսէ : Բոժոժ
կըսը ձեւ մը ունի, անոր մէջ մ
ասքսի թեղէ պզտիկ կծիկ մը կ'
(Պատկ. 64), որ փաթթուած
թրթուրն ըլլորտիքը : Թրթու
իր փոքին մէջ կը պատրաստէ մ
ասքսին խմորը, յետոյ այսպի
կը ժանէ զայն :

11. Մեսախոր. — 1. Շատ մը երկիրներու մէջ կը
պահեն շերամը : Թուրքիոյ մէջ, Պրուսայի և Գամակոսի
կողմերն, աւելի շատ կը պահեն զայն : Շերամին կը կեր
արահներ կը չնեն, կը աւքայնեն այդ տեղիքը, որոնց
կ'ըսուի շերամատուն :



Պատկ. 64 Բոժոժ
Պատկ. 65 Թիթեւ


2. Շերամի թրթ
թուրն իր բոժոժը շի
նելէ յետոյ անոր մէջ
կը քնանայ և ասնէ
մը վերջ կ'արթնն
այ ու կը ծակէ բո
ժոժը՝ դուրս կ'ելլէ,
թիթեւնիկը պէս :
Բայց չեն թողուր որ
ամէնքը այս կերպով
դուրս ելլեն, որովհետեւ մեծաքսի թեղը կը կարանն :
Ասոր համար, երբ կենդանին դեռ քնացած է, կ'առնեն
բոժոժը, ասք ջրաշոգիլին կը բռնեն, կենդանին կը մեռ
նի և անոր բոժոժը քակելով՝ կ'ուսնենան ընտիր մեծաք
սի թեղ, որ մէ պատուական ու թանկագին կերպաններ
կը պատրաստեն :

10. — 1. Ի՞նչ է շերամը : Ի՞նչպէս կը մեծնայ : **11.** — 1. —
Ի՞նչ տեսելով կը սնուցանեն շերամը : Ի՞նչ կ'ընեն այն արահներուն
ուր կը պահեն շերամը : 2. Մեսախոր ի՞նչպէս կը գոյանայ :

7. ԳՈՍ. — ՎՆԱՍԱԿԱՐ ԿԵՆԴԱՆԻՆԵՐ

12. Զանգազան վնասակար կենդանիներ. — 1. Կեն
դանիներ կան որ ուղղակի մարդու վրայ կը յարձակին
և կը բզբանեն զայն կամ կը վնասեն անոր, ինչպէս

վագրը, առիւծը, արջը, խիը, շանաձուկը :
2. Կան ուրիշ կարգ մը կենդանիներ ալ որ նոյն



Պատկ 66

Աղուէս



Պատկ. 67

Կուզ

պէս փնտասիւոր են, որովհետեւ մեր ընտանի կենդանիներուն վրայ կը յարձակին, ինչպէս, աղուէսները (Պատկ 66), կուզերը (Պատկ. 67) որոնք հաւնօցը կը մտնեն հաւերը կը խղզեն :

3. Բազ խոյնի կենդանիներ կան որ հունձքերուն կը փնտասեն : Ասոնք միջատներ են, օրինակ՝ ջորեակի թըլթուրը որուն անրեակ որդ կ'ըսուի և որ տունկերու արմատները կը կրծէ : Մարախը որ երբեմն միլիոններ կ'իջնէ դաշտերու վրայ և կը փճայնէ հունձքերը : Յիլոստրան որ պղտիկ աննշան միջատ մ'է, բայց այգիներու մէջ խաղողի տունկերուն արմատները կը կրծէ, կը փճայնէ դանտը :

4. Բանջարեղէնները կը կրծեն խոյունցն ու շոյոսը :

5. Վերջապէս կան աւելի պղտիկ կենդանիներ որ բրդէ հազուսաներ կը կրծնէ կը փճայնեն, ինչպէս ցեցերը :



Պատկ. 68

Խոյունց

12. — 1. Մարդուն վնասակար կենդանիներ քսէ : 2. Ընտանի կենդանիներուն վնասող կենդանիներ որո՞՞նք են : 3. Հունձքերուն, Բանջարեղէններուն, 5. Բուրդէ կերպաներուն վնասողներ որո՞՞նք են :

8. ԳԱՍ. — ԱՄՓՈՓՈՒՄ ԵՕԹՆԵՐՐՈՐԳ ԱՄՍՈՒԱՆ

Ոսկար ունեցող կամ ողնաւոր կենդանիներ. (1—2). — Ոսկորաւոր կամ ողնաւոր կ'ըսուի այն կենդանիներուն որ ոսկոր ունին և ողնայար : Ողնաւոր կենդանիներու գլխաւոր տեսակներն են. Անասուններ որոնց մարմինը մազերով ծածկուած է, քոչուներ՝ փետուրով ծածկուած, սողուններ որ կը սողան ու մերկ մարմին ունին, ձուկեր՝ թեկով ծածկուած են և կ'ապրին ջուրերու մէջ :

Անոսկար կամ անողնայար կենդանիներ. (3). — Այն կենդանիները որ իրենց ներքի զին ո՛չ ոսկոր ո՛չ ալ ողնայար ունին, կ'ըսուին անողնայար կենդանի : Ասոնցմէ շատեր արտաքին կարծր պատեան մը կ'ունենան, օրինակ. խղունջ, խեցեկափն, երկրմայր, ծովազնի :

Ընտանի կենդանիներ. (4—1). — Գլխաւոր ընտանի կենդանիներն են կովը և այծը որ կաթ կուտան և այս կաթէն կը պատրաստուի կարագ ու պանիր : Նաեւ եղը, ձին, էջը, կատուն, շունը և հաւնօցի թաչունները :

Մեղուներ. (8—9). — Մեղուները կը բնակին փեթակներու մէջ, անոնք ծաղիկներն հըլթ կը ժողովեն մեղր պատրաստելու համար : Մեղրը չաքաբի տեղ կըրնայ բունել և շատ առողջարար ուտելիք մ'է :

Շերամք. (10—11). — Շերամք թիթեանի տերեւներով կը կերակրեն շերամատուներու մէջ : Շերամք թրթուրը կը շինէ մետաքսի բոժոժը, յետոյ ծակելով դուրս կ'ելլէ թիթեանիկի պէս, ասոր համար տաք ջրաշողիլի մէջ կը մեռնեն դայն որ մետաքսի թելը անրողջովն քակեն :

Վնասակար կենդանիներ. (12). — Կենդանիներէն մէկը քանիները ուղղակի մարդուն վնասակար են. առիւծը, վագրը, արջը, խիը, շանաձուկը : Կան որ ընտանի կենդանիներուն կը փնտասեն : ինչպէս աղուէսը, կուզը, գայլը : Ուրիշներ կան որ բոյսերուն և հունձքերուն մեծ վնաս կուտան, սպիտակ որդը, մարախը, ֆիլոքսերան : Վերջապէս ոմանք ալ բանջարեղէններուն կը փնտասեն, ինչպէս խղունջը և շոյոսը :

Մ Ա Յ Ր Ե Ն Ի Լ Ե Ջ Ո Ւ

1. ԳԱՍ. — ԴԵՐԱՆՈՒՆ

1. Երեք դեմքեր. — Ինչպէս տեսանք (Բ. Պրակ, էջ 77, Դաս 11), Ես, դու, ան, ինք, մեք, դուք, անոնք, իրենք բառերը կը ներկայացնեն երեք դէմքերը :

2. Անձնական դերանուն. — Աս բառերը կը կոչուին անձնական դերանուն, ինչու որ անձի մը անունին դերը (պաշտօնը) կը կատարեն, անունին տեղը կը դրուին :

3. Անձնական դերանուններուն եղովուճը. — Անձնական դերանունները կը հղովուին և խօսքի մէջ կ'ըլլան Տէր բայի, Սեռի խնդիր և Բնութեան խնդիր :

4. Ա. Դեմքի դերանունը սապէս կը հղովուի.

	Եզակի	Յոթնակի
Ուղղական	Ես	Մենք
Հայցական	Իս	Մեզ
Սեռական	Իմ	Մեր
Տրական	Ինձի	Մեզի
Բացառական	Ինձմէ	Մեզմէ
Գործիական	Ինձմով	Մեզմով

1. Սա խօսքերուն մէջ որո՞նք են անձնական դերանունները :
Ես կը գուրգուրամ մ'որ վրայ, վասնզի շատ կը սիրէ զիս, և իմ օգտիս համար կ'ընէ ամէն զոհողութիւն : Ինձի չի զլանար ամէն խնամք ու հոգածութիւն : Ինձմէ գատ ալ մէկը չունի որ սփոփէ իր ցաւերը : Ինձմով կը զրաղի շարունակ : Ես ալ կ'աշխատեմ որ ինձմէ զոհ ըլլայ ամէն կերպով :

2. Օրինակեցէք եւ ստորագծեցէք անձնական դերանունները :
Մենք պարտաւոր ենք հոգալու մեր ծնողքը երբ ծերանան : Մեզմէ կը սպասեն անկեղծ սէր ու հոգածութիւն : Մեզմով է որ կը

միմիմարուի իրենց կեանքը. ու մեզ կը վնասեն ինչ վիճակի մէջ ալ ըլլան : Մանր միայ՛ի մարմնով պիտի բաժնէ մեզ մեր ծնողքէն . իսկ հոգիով մենք կատարած պիտի ըլլանք անոնց շատակին հետ որ մեզի շատ անուշ պիտի թուի. մինչև որ մենք ալ աւարտենք մեր կեանքին ընթացքը :

3. Ժխտական ձեւով խոնարհեցէք կը ԿԱՐՄԵՄ բայը. այսպէս Սանկ. եղանակ. Ետիայ՛ Չեմ կարծեր, չես կարծեր, չի կարծեր, չենք կարծեր, չէք կարծեր, չեն կարծեր :

1. Որո՞նք են երեք դեմքեր՝ եզակի եւ Յոթնակի : — 2. Աս բառերը ինչո՞ւ Անձնական դերանուն կը կոչուին : — 3. Անձնական դերանունները խօսքին մէջ ի՞նչ պաշտօն կրնան վարել : — 4. Առաջին դեմքի Դերանունը ի՞նչպէս կը հղովուի :

2. ԳԱՍ. — ԱՐՏԱՍԱՆՈՒԹԻՒՆ

ՏԱՍԱԲԱՆԵԱՅ ՊԱՏՈՒԻՐԱՆՔ ԱՌՈՂՋԱՊԱՀՈՒԹԵԱՆ

Առողջութիւնը աշխարհի բարիքներուն ամենամեծն ու գլխաւորն է : Ուստի միտքդ պահէ՛ հետեւեալ կանոնները .

1. Չափազանց ուժեղի ու խալիլի և ամէն տեսակ շտապութեան զգուշացիր :
2. Անմարտելի կերակուրներ մի՛ ուտեր :
3. Կեցած տեղդ, գործելու և պառկելու սենեակդ միշտ մաքուր օդ գտնուի : Ամառը՝ միշտ, իսկ ձմեռը ստեպ բաց պատուհանդ :
4. Յանկարծական ցրտութեան զգուշացիր :
5. Քրտնած՝ պազ ջուր մի՛ խմեր :
6. Սաստիկ սաքութեան զգուշացիր :
7. Զգայարանքդ չափաւոր գործածէ : Մտի՛ն մէջ կամ շատ նուրբ աշխատութիւններով աչք մի՛ յոգնեցնիր :
8. Ուժեղ վեր գործ մի՛ ընիր . ծանր բան մի՛ վերցնիր :

9. Քեզի չվերաբերող գործերու, կոխներու մէջ մի' նետուիր:

10. Եթէ առողջութիւնդ խանգարի, բժիշկի դիմէ անյապաղ, և անոր խրատին անսա՛:

4. Վերի գասր կարդացէ՛ք, գոց սորվեցէ՛ք: Յետոյ նոյնը Ա. պառնի եզակի Գ. Դեմով ալ գրեցէ՛ք:

5. Կիծերուն տեղ յարմար բնուէր դրէ՛ք: (Գ. Վարժուքին Մանկանց, էջ 25, Հրահանք, 22):

1. — կը գործածուի պատ ծեփելու: 2. Թամբը, սանձը, սապան- դակը, փոկը ձիու մը — են: 3. Անիւր, սունակը, նստարանը, աղե- ղը, գապանակը, կառքի մը — են: 4. — ով կը շինեն պնակ, գաւաթ, Թակոյկ, ծաղկաման են: Իսկ — ով կը շինեն կրակարան, լական, կոնք, շահիճ, խալկին, եւն: 5. Ոսկին, արծաթը, Էրկաթը, զինկը, անկը, արոյրը գործածական — են: 6. Կիւերը կ'ունենան հետեւեալ — ը. օղ, մանեակ, բայռ, սպարա՛ջան: 7. Ոսկերիչը կը շինէ — ը: 8. Մկրատ, տանդ, կանգուն, են. դերձակի — են:

3. ԳՍՍ. — ԱՆՁՆԱԿԱՆ ԴԵՐԱՆՈՒՆ (Շար.)

5. Բ. Ե. Գ. Դեմի գերանուններուն հոլովումը. — Անձնական կամ էական դերանուններուն Բ. և Գ. Դէմ- քերը կը հոլովուին այսպէս.

	Եզակի			Յոսկակի	
Ո. Դուն	Ան	Ինք	Դուք	Անոնք	Իրենք
Հ. Քեզ	Ան	Ինք	Ձեզ	Անոնք	Իրենք
Ս. Քու	Անոր	Իրեն	Ձեր	Անոնց	Իրենց
Տ. Քեզի	Անոր	Իրեն	Ձեզի	Անոնց	Իրենց
Բ. Քեզմէ	Անկէ	Իրմէ	Ձեզմէ	Անոնցմէ	Իրենցմէ
Գ. Քեզմով	Անով	Իրմով	Ձեզմով	Անոնցմով	Իրենցմով

Գիտելիք. — Հայցականները կրնան զ գիրն ունենալ, այսպէս. գնեզ, գայն, զինեք, զանեք, զանունեք, զիրենեք:

6. Անձնական դերանուններուն պատճառով. — Ես, դուն, ան, ինք, (Եզակի). մենք, դուք, անոնք, իրենք (Յոքնակի) Տէր բայի պաշտօն կը կատարեն, ինչու որ Ուղղական հոլով են:

Իս, քեզ, ան, ինք (կամ՝ զիս, զքեզ, զայն, զինք) Հայցական հոլով են և Սեռի խնդիր կ'ըլլան:

Ինձի, ինձմէ, ինձմով, քեզի, քեզմէ քեզմով՝ և Տրական, Բացառական, Գործիական հոլով եղող միւս բոլոր Անձնական դերանունները Բնութեան խնդիր կ'ըլլան խօսքի մէջ:

Իսկ Սեռական հոլով Անձնական դերանունները (իս, քու, անոր, իրեն, մեր, անոնց, իրենց) Յատկացուցիչ են: [Տէ՛ս նաև Ստացական Դերանունը]:

7. Իրար եւ մեկգրեկ. — Անձնական դերանուն են նաև իրար և մեկգրեկ բառերը, որոնք կը հոլովուին սապէս. — Ուղղական (չունին), Հայց.՝ իրար, մեկգրեկ, Սեռ. և Տրակ. իրարու, մեկգրեկու, Բաց. իրարուէ, մեկ- մեկէ, Գործ. իրարմով, մեկգրեկով: Յոքնակի չունին:

6. Սա Դերանունները վերու ծեցէք օրինակին պէս. Օրինակ. Անկէ — էական դերանուն, Գ. Դէմք, Եզակի, Բացառական հոլով Բնութեան խնդիր:

Անով, իրենց, ձեզի, իմ, անոնցմէ, քու, մեր, իրմէ, զքեզ, ինձմով, անոր, ինձմէ, քեզի, իրեն, անով, գնեզ:

7. Նոյն Դերանունները մէյլեկ խօսքի մէջ գործածեցէք, այսպէս. — Կտոր մը օճառ ունէինք, անով լուացուեցանք:

5. Բ. Ե. Գ. Դեմի Անձնական դերանուններն ի՞նչպէս կը հոլովուին: — 2 գիրս ո՞ր հոլովին վրայ կրնայ դրուիլ (*): — 6. Ի՞նչ պատճառ կը վարեն Ուղղական հոլով Անձնական դերանունները, Հայցականները, Տրականները, Բացառականները, Գործիականները, Սեռական հոլովները: — 7. Ի՞նչ են իրար եւ մեկգրեկ բառեր: Ի՞նչպէս կը հոլովուին:

(*) Դիտել տուէք թէ այս զ դիրքն գործածուող գրաբարէն մնացած է:

4. ԳԱՍ. — ՀՐԱՀԱՆԳՆԵՐ

8. Արանկի վերածեցէ՛ք 2 Պրակ. էջ 58ի 8 դասը (ԹՈՒԻ) :

9. Նոյնը Յոճակի րէ՛ք, այսպէս.

Դուք խելոյ հաշուով վաճառականներ եք, հող, փող ու ապրանք, գիտե՛մ, շատ ունիք. բայց երբ ձեր փողե՛ն, եւն.

10 Գրեցէ՛ք 3 հաս փրակական ամական, 3 հաս Յուցական ամական, 3 հաս Ասացական ամական, 3 հաս Քուական ամական եւ 3 հաս Անորոշ ամական :

11. Նոյն Ածականներուն փոյ՛ղք մէյմէկ Գոյական :

12. Հարցումներուն պատասխանեցէ՛ք (Գ. Վրժ. էջ 41, Հրան. 38):

1. — Ե՞րբ շոգի կ'ըլլայ շուրջ:

2. — Ե՞րբ սով կը տիրէ տեղ մը:

3. — Ե՞րբ համահարակ կայ, կ'ըսուի:

4. — Ի՞նչ կ'ըսուի ախտ մը որ ուրիշի կը փոխուի:

5. — Երկու անձ ինչ կերպով ժամադրուծին ըրած կ'ըլլան

6. — Մարդ մը ինչպէս ուրիշի մը յաջորդ կարգուած կ'ըլլայ: Նախորդ ինչ ըսել է:

7. — Ի՞նչ կը նշանակէ «Յակիր պարտական է Պետրոսին և Պետրոս պարտատէր»:

5. ԳԱՍ. — ՅՈՒՑԱԿԱՆ ԳԵՐԱՆՈՒՆ

8. Հինգ «եսակ դերանուն. — Դերանուններն ալ նինք տեսակ են. Անձնական, Յուցական, Ասացական, Յարաբերական, Անորոշ:

9. Անձնական դերանունները սորվեցանք նախորդ դասի մէջ (Դաս և 3, էջ 54, 56, 57):

10. Յուցական դերանունները կը դրուին բան մը ցոյց տալու համար և ունին երեք դէմք.

		Եզակի			Յոճակի
Ա. Դեմք.	Այս	Աս	Ատիկա	Սա	Ասոնք
Բ. »	Այդ	Ատ	Ատիկա	Տա	Ասոնք
Գ. »	Ան	Ան	Անիկա	Նա	Անոնք

11. Յուցական դերանունները կը հարմուին այսպէս.

		Եզակի		Յոճակի
Ողղ. եւ Հայց.	Այս	Աս	Ատիկա	Ասոնք
Սեռ. եւ Տրական	Ասոր			Ասոնց
Բացառական	Ասկէ			Ասոնցմէ
Գործիական	Ասով			Ասոնցմով

12. ԱՍ. ցուցական դերանունը կը հարմուի այսպէս.

Եզակի.	Սա	Սուոր	Սքէէ	Սուով
Յոճակի.	Սուոնք	Սուոնց	Սուոնցմէ	Սուոնցմով

13. Մօժ եւ հեռու. — Այս, աս, աւիկա, առիկա կը ցուցնեն շատ մօտ բան մը, այդ, աս, աւիկա, առիկա՝ թէ՛ մը հեռու բան մը, իսկ այն, նա, եւն, ցոյց կուտան հեռաւոր բան մը:

13. Այս Յուցական դերանունին պէս հոլովեցէ՛ք նաեւ Բ. եւ Գ. Դեմքեր:

14. Սաին պէս հոլովեցէ՛ք աս եւ նա Յուցական դերանուններ:

15. Հետեւեալ դերանունները եզակի րէ՛ք միեւնոյն հոլովով: Ասոնցմէ, ասոնց, անոնք, սուոնցմէ, սուոնց, սուոնք, նըւոնցմով, սուոնց, սուոնք, սուոնցմով:

16. Հարցումներուն պատասխանեցէ՛ք (Գ. Վրժ. էջ 42, Հրան. 39):

1. — Ինչ մէջ կը դրուի սուրբ:

2. — Ի՞նչը մորմով պատած է:

3. — Ի՞նչը խորի կը կոչուի:

4. — Պահարանի մէջ ինչ կը դրուի:

5. — Ի՞նչ է ցնցուղը:

6. — Ի՞նչ է հանրը:

7. — Որոնք Գրիստոնեայ կը կոչուին:

8. Քանի՞ «եսակ Գերանուն կայ: Որո՞նք են: — 9. Որո՞նք են Անձնական կամ Էական դերանուններ: — 10. Ինչո՞ւ կը դրուին Յուցական դերանուններ: Քանի՞ Գեմք են: Որո՞նք Ա. Գեմք են, Ո՞րոնք Բ. եւ որո՞նք Գ. Գեմք: — 11. Ի՞նչպէս կը հոլովուին: — 12. Սա Յուցական դերանունը ի՞նչպէս կը հոլովուի: — 13. Յուցականներէն որո՞նք մօտ եւ որո՞նք հեռաւոր առարկայ կը ցուցնեն:

6. ԴԱՍ. — ԱՐՏԱՍԱՆՈՒԹԻՒՆ

Ի՞նչ է շՐԵՇՏԱԿԸ

Պօղոս՝ գոց բրած արդէն իր համար՝
 Աւագին վրայ նստէր կը խաղար :
 Բովն էր մեծ-մայրը՝ ձեռքին մեջ Սաղմոս,
 Ակնոցն ալ աչքը՝ կը կարդար անխօս :
 Յանկարձ՝ պատանին վագեց անոր հով
 Ու վիզը ցատեց : — Հանին՝ զարմանով՝
 «Ահառա՛կ, քո՛ղ սուր օձիքս, ա՛լ հերի՛ք :
 — Շատ լաւ, բայց խնդրեմ՝ ըսէ՛, մեծ-մայրիկ,
 Հրեշտակ, որ կ'ըսեն, ի՞նչ տեսակ բան մ'է,
 Մե՛ծ է, պզտիկ է՝ կ'աղաչեմ պատմէ՛ :»
 Հանին՝ սիրալիբ նայուածով մ'անհուն՝
 Ըսաւ . «Հրեշտակը, դո՛ւն ես անա, դո՛ւն :»

17. Հարցումներուն պատասխանեցէք բերանացի ու գրաւոր :
 Ի՞նչ տեսակ բան է Պօղոսը: — Յոտո՞ւ կ'Թէ Հասարակ : — Ի՞նչ ըսել
 է համար : — Ի՞նչ ըսել է Սաղմոս : — Ո՞վ գրած է գայն, — կրօնա-
 կան ուրիշ գիրքեր գիտէք : — Ի՞նչ ըսել է պատանի, — կեանքի շրջան-
 ները որո՞նք են : — Ի՞նչ ըսել է հանր. եւն :

18. Նոյն հաստածին մէջի բայեր ստորագծեցէք :
 19. Կէտերուն տեղ դրէք յարմար բառեր (Գ. Վարժ. էջ 43,
 Հրան. 40) :

1. ... ը հեղուկ է : — 2. Մեր ... ը կուգայ ամպերէն : — 3. ... ը
 կը գործածենք լուսացուելու, կերակուր եփելու, խմելու, եւն : — 4. ... ը
 երբք միճակ ունի. հեղուկ, կազային և պինդ . — 5. ... ը կը ստոի երբ
 օդը սաստիկ ցուրտ է : — 6. ... կազային միճակ առած ջուր է : — 7.
 ... կրնայ ծառայել մերենաներ շարժելու : — 8 ... կ'ըսուի այն ջուրը
 որ հանքային նիւթեր կը պարունակէ : — 9 ... կ'ըսուի այն տանի ուրիէ
 կը բղխի հանքաջուր :

7. ԴԱՍ. — ԱՍՏՅԱԿԱՆ ԳԵՐԱՆՈՒՆ

14. Ստացական դերանուններ. — Ստացական դեր-

բանունները կը ցուցնեն թէ՛ բան մը որո՛ւնն է, և կը գոր-
ծածուին առաջուց յիշուած անունի մը տեղ : Օրինակ

Ես իմ դասս կը սերտեմ, ան ալ իրենը թող սերտէ :
 Մեր տունը մեծ չէ, ձերինը մեծ է :
 Գրիչ չունի՞ս, ա՛ռ, խմի՛նովս գրէ :

15. Ստացական դերանուններն են.

Եզակի

Ա. Դեմք.	Իմս կամ իմինս	Մերը կամ մերինը
Բ. »	Քուկդ »	Ձերը » ձերինը
Գ. »	Իրը »	Իրենը » իրենցինը
	Անորը »	Անոնցը » անոնցինը

Յո՛ւնակի

Ա. Դեմք.	Իմիններս	Մերինները
Բ. »	Քուկիններդ	Ձերինները
Գ. »	Իրենները	Իրենցինները
	Անորինները	Անոնցինները

20. Օրինակին պէս նույնեցէ՛ք Ստացական դերանուններ.
 Օրինակ. — Իմինս, իմինս, խմի՛ն, խմի՛ն, խմի՛ն. — Իմիններս, իմին-
 ներս, իմիններէս, իմիններովս :

21. Ստացական դերանուններ մէյնէկ խօսի մէջ գործա-
ծեցէ՛ք: Քուկիններդ, ձերիններէն, իրեններով, իրենցինները, իմին-
ներս, իրենէն, մերիններուն :

22. Ստացական դերանուններուն եզակին գրեցէ՛ք՝ նույր ան-
փոփոխ պահելով : Քուկիններդ, իրենցինները, ձերիններուն, քուկին-
ներուդ, մերիններէն, իմիններովս, իրեններէն, մերիններով, իմիններս
քուկիններովդ, իրենցինը, մերիններուն, անոնցինին :

23. Ստացականներուն Համանիւները (*) գտէ՛ք : Սպիտակ, քն-
քուշ, քաղցր, երկչոտ, ծանկազին, տրտում, փոքր, ուժեղ, խաւար,
ստուեր, գուլ, անողորմ, ամարդի, նուրբ, ջինջ, փափուկ, գոռոզ :

(*) Համանիջ՝ ըսել է միեւնոյն նշանակուածիւն ունեցող բան :

14. Ի՞նչ կը յայտնեն Ասացական դերանունները : — 15. Որո՞նք են : — Ի՞նչպէս կը հստակ ին : — Ասացական դերանունները Ասացական անականներուն կը նմանի՞ն :

8. ԳԱՍ. — ՀՐԱՀԱՆԳՆԵՐ

24. Էջ 54, Հրահանգ 1ը Յոննակիի վերածեցէք, այսպէս .
Մենք կը գորգուրանք մեր մօրը վրայ, եւն :

25. Սա բայերուն եով երեքական բառ դրէք, իբրեւ Տէրբայի :
Օրինակ. — Զին, շունը, տղան կը վազէ : (Տես Բ. Վարժ. էջ 152
Հրահանգ 126) :

1. Լոյս կուտայ (ո՞վ, ի՞նչը) : — 2. Խոտ կ'ուտէ : — 3. Կը տեղայ :
4. Կը բուսնի : — 5. Կը Հասուննայ : — 6. Կը մարի : — 7. Կը վառի :

26. Եզակիի վերածեցէք 54էջի, 2. Հրահանգը, այսպէս .
Ես պարտաւոր եմ հոգայու իմ ծնողքս, եւն :

27. Գրեցէք 3 նախադասութիւն Հարնացական ձեւով, 3 հաս
ալ Հարցական ձեւով :

9. ԳԱՍ. — ՅԱՐԱԲԵՐԱԿԱՆ ԳԵՐԱՆՈՒՅ

16. Յարաբերական դերանուն կը կոչուի որ բառը
և կը հորովուի այսպէս .

	Եզակի	Յոննակի
Ուղղ. եւ Հայցական	Որ	Որոնք
Սեռ. եւ Տրական	Որուն	Որոնց
Բացառական	Որմէ	Որոնցմէ
Գործիական	Որով	Որոնցմով

Գիտ. — Հայցականի մէջ որ յարաբերականը կը գոր-
ծածեն նաեւ գոր (Եզակի) գորով (Յոննակի) ձեւերով,
Ուղղականին նեա չչփոխելու համար :

17. Յարաբերակ. — Յարաբերական որ բառը իր-
մէ առաջ կ'ուեննայ յարաբերակ մը (Ասուն կամ Դերա-
նուն). Օր. — Հացը, գոր եւ կուսակ, իմ մարմինս ե :
Աս խօսքին մէջ յարաբերակն է հացը :

18. Յարաբերական դերանունին դէմք. — Յարաբե-
րական Դերանունը ամէն դէմքի տեղ կը գործածուի : Ես
որ կը խօսիմ, դուն որ դեռ պղախի ես, ան որ, մենք
որ, դուք որ, անոնք որ, եւ այլն :

28. Սա խօսքերուն մէջ որոշեցէք Յարաբերականներուն թիւը,
հորովը եւ դեմքը : Գտէք նաեւ յարաբերակները :

Աս դասը, գոր կը սորվինք, մեզի օգտակար է : — Այն մարդը, որմէ
դրամ ուզեցի, հայրս է : — Սիրենք Աստուած որ մեզի պարգեւած է ա-
մէն բարիք : — Այժերը, որոնցմէ կրճ կ'ընցինք, մեր հովուինն են : —
Ալիքը, որով հաց կը շինենք, ազացուած ցորենն է :

29. Որ յարաբերականը վեց հարկներով գործածեցէք մէյմէկ
խօսքի մէջ :

30. Որ յարաբերականը ի՞նչ պատճառ ունի սա խօսքերուն մէջ
(Տէրբայի՞ն, Սեռի խնդի՞ն, Բնութեան խնդի՞ն թէ Յասկացուցի՞ն) :

Այն կառքերը, որոնցմով ճամբորդեցինք, վարձու են :
Վարդուհին, որուն մայրը մեռաւ, շատ տխուր ու սգաւոր է :
Հայրս նաւակ մը զնեց, որով պիտի գրօնենք լիճին վրայ :
Ես չեմ կարդացած այն զիրքը գոր կը գովես :
Աղբատը, որուն հաց տուիր, ձեր ու անկար է :
Պէտք է միշտ օգնել անոնց որոնք կարօտուածեան մէջ են :

16. Ո՞ր բառ Յարաբերական դերանուն կը կոչուի : Ի՞նչպէս կը
հորովուի : Հայցականը ուրիշ ի՞նչ կերպ կը գործածուի : — 17. Ի՞նչ
է Յարաբերակ : — 18. Յարաբերական դերանունը ի՞նչ դէմք կ'առնէ :

10. ԳԱՍ. — ՀՐԱՀԱՆԳՆԵՐ

31. Սա բայերուն Աներեւոյթը գտէք :
Կե՛ր, գացինք, եկաւ, է, պիտի լայ, կ'ուտեմ, կ'երթայի, Թող, մեծ-
ցուր, Թո՛ւք, խառնէ, կերայ, ուզեցին, ըրիր, կ'ընեն, գտայ, պիտի մտ-
նէի, իջէք, հեծիր, ստիք, խառնելու, պիտի Թընեմ, պնգ, մեռան, Թը-
նաւ, զոյցոյ, տեսար :

32. Նոյն բայերը մէյմէկ խօսքի մէջ գործածեցէք :

33. Ըսէ՛ք ի՞նչ կ'ընեն

Եկեղեցիին մէջ, դպրոցին մէջ, դասին մէջ, բաղնիքին մէջ, պանդո-

կին մէջ, Ձատրոնին մէջ, փուռին մէջ, արհեստանոցին մէջ, հանքին մէջ, ծովին մէջ, պարտէզին մէջ, անտառին մէջ, սեղանատան մէջ, նշարանին մէջ, հիւրանոցին մէջ, աւագանին մէջ, խնկամանին մէջ, սրբատուփին մէջ, կոնքին մէջ, գերեզմանատան մէջ, այգիին մէջ, հնձանին մէջ, շտեմարանին մէջ, մատանին մէջ, կարասին մէջ, ջերմոցին մէջ:

11. ԳԱՍ. — ԱՆՈՐՈՇ ԴԵՐԱՆՈՒՆ

19. Անորոշ դերանուն են Անորոշ անականները երբ առանց Գոյականի գործածուած են:

20. Անորոշ դերանունները յօդ կ'առնեն և կրնան հոլովուիլ:

21. Անորոշ դերանուններն են. Ամէնը, բոլորը, ուրիշը, մէկը, ամէն մէկը, ո՛չ մէկը, միւսը, մէկալը, նոյնը, միևնույնը, մէկ քանին, ասանկը, այսչափը, քանի՞ն, ո՞վ, ո՞րը, ո՞րչափը, ի՞նչը, այսինչը, բան մը, ոչինչ, ամէն ինչ, ոմանք, եւն:

34. Հոլովեցէք սա Անորոշ դերանունները.

- 1. Ամէնը, մէկը, ոչ մէկը (°):
- 2. Ո՞վ, ո՞րը:
- 3. Նոյնը, ոչինչ, ո՞րչափը, բոլորը, քանի՞ն, ասանկը, շատը:

35. Սա Անորոշ դերանուններն ի՞նչն թիւ եւ ի՞նչն հոլով են.

Ամէնէն, մէկուն, ոչ մէկուն, ոչ մէկով, որո՞ն, նոյնին, ոչինչէն, ո՞րչափին, որո՞նց, որոնցմօ՞վ, ո՞րչափներու, միւսներէն, ուրիշներու, մէկէն, որոնցմօ՞, ինչըրո՞, ոչինչի, ամէն մէկէն, ոչ մէկու, նոյնէն, այսչափով, քանիններու, ասանկներով:

36. Անորոշ անականները եւ Անորոշ դերանունները զանազանեցէք հետեւեալ խօսքերուն մէջ.

Որը կ'ուզես, — Ո՞ր փողոցը կը նստին, — Նոյն օրը գալու էիր, — Նոյնը բեզի ալ պիտի տամ, — Շատ մարդ կը ճանչնամ, բայց ո՛չ մէկը մտերիմս է: — Ո՞րչափ դրամ ունիս, — Այսչափը հերթը է ինձի: — Ո՞րչափ տալու եմ բեզի: — Երեք եղբայր ունիմ, մէկը կօշկակար է, մէկը

(°) Ամէնը, ամէնուն, — մէկը, մէկուն, — ո՞վ, ո՞րը, ու՞րու եւ այլն:

ճարտարագետ, իսկ միւսը գրողարուժիւն կ'ընէ: — Ի՞նչ է ուզածդ, ի՞նչ արհեստ պիտի սորվիս: — Շատը վնաս է: — Շատ մարդ կայ:

37. Կէտերուն սեղ դրէք յարմար բառերը (Գ. Լատժ. էջ 46, Հրահ. 43):

- 1. Գիւզագետ կը կոչուի ... (նվ):
- 2. Գիւզախմբագետ կը կոչուի ... (նվ):
- 3. Փոխ կառավարիչ կը կոչուի ... (նվ):
- 4. Կառավարիչ կամ Գուտագետ կը կոչուի ... (նվ):
- 5. Կուսակալ կը կոչուի ... (նվ):
- 6. Կայսր կը կոչուի ... (նվ):

19 Ո՞ր բառեր Անորոշ դերանուն են: — 20. Անորոշ դերանունները յօդ կ'առնեն, կը հոլովուի: Ի՞նչպէս կը հոլովուին: — 21. Գոց բռէք Անորոշ դերանունները:

12. ԳԱՍ. — ԱՐՏԱՍԱՆՈՒԹԻՆ

Մ Բ Ջ Ի Ի Ն Ն Ո Ի Տ Ղ Ա Ն

Պրզիկ ու սեւ մըրջիւններ իրենց կըլոր ծակին հով Սրկէ նրկէ փրշուրներ Բերեն դիզեն արեւով:

Օրն ամառին արեւոս կ'երբան հետու, հետու սեղձաւիկ, հունցեր ու ծըլօս Կրցեն, կըրեն միասեղ:

Ես կը սիրեմ մըրջիւնին Երբալ դիսել սքնակը, Կը սիրեմ միտ օրն օրին, Գճնել իրենց քարակը: Մըջիւն, մըջիւն սեւուլիկ, Ես ալ անա քեզի պես Գործ մը կ'ընեմ պրզսրիկ, Որ մարդ դառնամ իրապէս:

Յ. ՅԱՐՈՒԹԻՆԵԱՆ

15. ԴԱՍ. — ԱՅԼԵՒԱՅԼ ՏԵՍԱԿ ՄԱԿԲԱՅՆԵՐ

25. Եղանակի մակբայներ. — Լաւ, զեշ, աղիկ, դիտանալ, կանաց, շուս եղանակ ցուցնող Մակբայ են:

26. Ժամանակի մակբայներ. — Առաջ, ետք, հիմա, այսօր, վաղը, երեկ, արդեւ, դեռ, կանուխ, ուշ, երբեմն:

27. Տեղի մակբայներ. — Շուրջը, մօտը, հոս, հոն, հեռուն, ուր, վեր, վար, ներս, դուրս, առջեւ, ետեւ, դեմ, դիմաց:

28. Քանակ կամ չափ ցուցնող մակբայներ. — Շատ, քիչ, աւելի, միայն, աչ, չափազանց:

29. Հարցական մակբայներ. — Ո՞րչափ, ի՞նչպէս, ինչո՞ւ, ե՞րբ, ո՞ւր, ուսի՞ց, ուրի՞շ:

30. Հաստատական մակբայներ. — Այո՛, անշուշտ, իրաւ, ճիշտ, հարկաւ:

31. Քացասական մակբայներ. — Ո՛չ, չ, մի, բնաւ, երբեք, ամենեւիկ, ոչիկ:

32. Տարակուսական մակբայներ. — Թերեւս, գուցե՛, արդեօք, միթե՛, եւն:

33. Յուցական մակբայներ. — Ահա, ահաւասիկ:

43. Վերոյիշեալ Մակբայները գեցեցէ այբուբենի կարգով խառն:

44. Նոյն ինք սեսակ Մակբայներէն մէյմէկ հաս գործածեցեցէ ինք խօսքի մէջ:

45 Կէտերուն տեղ դրեց յարմար բառեր: (Գ. Վարժ. էջ 47, Հրահ. 44):

1. Ինկատուփի մէջ կը ծխեն ... 2. ... տանս մ'է որուն մէջ կը դնեն Ս. Հաղորդութիւնը կամ օրհնուած նշխարը 3. Որբութիւն տանել կամ ճաշակուիլ՝ ըսել է ... 4. և 5. Քրիստոնեաները... տարին 5 անգամ, այսինքն հինգ տաղաւարներուն՝ Քանանային խոտովանելով և ապաշխարելով 6. Շուրջառը, վակասը, փորուարը, Սաղը եւն. ժամարարին ... են 7. Քրիստոսի կեանքը պատմող գիրքն է ... 8. Սաղ.

մոտ, ժամայիրք, Մաշտոց, Պատարագատեար, Շարակնոց եւն եկեղեցական ... են:

25. Որո՞նք են եղանակի մակբայներ: — 26. Ժամանակի: — 27. Տեղի: — 28. Քանակի: — 29. Հարցում նշանակող Մակբայներ որոնք են: — 30. Ի՞նչ կը ցուցնեն Հաստատական մակբայներ եւ որո՞նք են: — 31. Քացասականներ: — 32. Տարակուսականներ: — 33. Յուցական մակբայներ:

16. ԴԱՍ. — ՆԱԽԱԳՐՈՒԹԻՒՆ

34. Նախադրութիւն. — Կրնամ ըսել. Գիրքս անդանին վրայ է: — Գիրքի սեղանին սակն է:

Աս խօսքերուն մէջ, վրայ և սակ բառերը ցոյց կուտան թէ զիրք և սեղան բառերուն մէջ յարաբերութիւն մը կայ: Վրայ Նախադրութիւնը կը միացնէ զիրք և սեղան բառերը: Տակ Նախադրութիւնը, նոյնպէս, կը միացնէ զիրքն ու սեղանը:

35. Նախադրութիւնը բառ մ'է որ Գոյականին կամ Դերանունին քով կը դրուի՝ բային հետ անոր յարաբերութիւնը ցուցնելու համար:

36. Նախադրութեան խնդիր. — Նախադրութեան քովը դրուած բառը (Անուն կամ Դերանուն) կը կոչուի Նախադրութեան խնդիր: Վերքի օրինակներուն մէջ վրայ և սակ Նախադրութիւններուն խնդիրն է սեղանին:

46. Սա խօսքերուն մէջ ո՞ր բառերը Նախադրութիւն են եւ ո՞ր բառեր Նախադրութեան խնդիր:

1. Գիրքերը պայուսակից մէջ գիրք: 2. Ծառերուն վրայ հասուն պղտուղներ կան: 3. Արաղաղը կը խօսի առտուրնէ ի վեր: 4. Ես հօրս հետ կ'աշխատիմ. 5. Դուն մօրդ բով կեցիր: 6. Քեզի պէս տղայ չեմ տեսնի: 7. Ճաշէն ետք զբօսանք պիտի ընենք: 8. Մեր դրան առջեւ երկու ծառ կայ: 9. Անոնց հետ գնան:

47. Կէտերուն տեղ դրեց յարմար Ամականները (Գ. Վարժ. էջ 48, Հրահ. 45):

1. Լեռի վրայ եղող երկիրները կ'ըսուին . . . — 2. Թէ ծովու մէջ և Թէ ցամաքի վրայ ապրող կենդանիներ կ'ըսուին . . . — 3 Ուրիշին փոխանցուող հիւանդութիւնները կ'ըսուին . . . — 5. Կալուածի համար վճարուած տուրքերը կ'ըսուին . . . — 6. Շատ զեղեցիկ ու մեծ շէնքերը կ'ըսուին . . . — 7. Չսպասուած պատահող բաները կ'ըսուին . . . — 8. Սրտէ բղիճած խօսքերը՝ աղօթքները կ'ըսուին . . . — 9. Առատ վազող շուրերը, արցունքները կ'ըսուին . . . — 10. Երկու մտքի մէջ եղող մարդիկ կ'ըսուին . . . — 11. Անհրաժեշտ պարտէզները, արտերը, եւն. կ'ըսուին . . . — 12. Տեղ մը խնձուած շատ մը մարդիկ կ'ըսուին . . . :

34-35. Ի՞նչ է նախադրութիւնը եւ ի՞նչ կ'ընէ : — 36. Ո՞ր բառեր կը կոչուին նախադրութեան խնդիր : — Նախադրութիւնը իր խնդիրէն առաջ կը գրուի թէ վերջ :

17. ԳՍՍ. — ՆՈՒԽՈՒԹՈՒԹԻՒՆ (Շար.)

37. Խնդիրէն առաջ դրուող նախադրութեան. — Առանց, վասն, բացի, իբրեւ, միևնչեւ, դեպ ի :

38. Խնդիրէն ետքը դրուող նախադրութեան. — Վրայ, սակ, քով, մեջ, մօտ, առջեւ, ետեւ, առաջ, ետք, համար, վեր, վար, դեմ, պէս, զոյս, մեկտեղ, ներս, դուրս, համար, չափ, համեմատ, հանդերձ :

39. Նախադրութեան խնդիրին հոլովը. — Նախադրութիւններն ալիւսալի հոլով խնդիր կ'առնեն, այսպէս .

1. Սեռական հոլով խնդիր կ'առնեն սա Նախադրութիւնները. — Ետեւ, դիմաց, առջեւ, ետեւ, վրայ, սակ, մեջ, քով, տեղ, փոխանակ, միջեւ, եւն. :

2. Տրական հոլով կ'առնեն. — Համար, հետ, առանց, միևնչեւ, դեմ, չափ, մօտ, պէս, համեմատ, համեմատյալ :

3. Բացառական հոլով կ'առնեն. — Չոք, բաց ի, ի վեր, դուրս, ներս :

4. Հայցական հոլով կ'առնեն. — Ի վեր, ի վար, ի բուն, միևնչեւ, դեպի :

48. Շեղագիր բառերուն տեղ ուրիշ Գոյականներ դրէք : Յետոյ նոյն բառերով խօսքեր շինեցէք օրինակին համեմատ :

Ծառին վրայ, պատին քով, վրանի տակ, սեղանին բոլորափքը, հողին ներքեւ, շենքի վեր, անտառին մէջ, շուկային մօտ, ձիովը մէկտեղ, դրան առջեւ, գրին տեւը, ինձմէ ետքը, Աստուծոյ համար, հացին հետ, ինչի չափ, խաճուղի վերեւ, հովին դէմ, Ս. Մեսրոպի պէս, պարտէզին դիմաց, ասիկէ զատ, դասես առաջ, դաշտին մէջտեղ, առանց աշխատարանի, մինչեւ զերեզման, դէպ ի մայրը :

Օրինակ. — Ծառին վրայ կուս մը բալ չէ մնացեր :

49. Այլեւայլ հոլովներով Գոյականներու հետ մէյմէկ Նախադրութիւն կցելով խօսքեր շինեցէք :

50. Գտէք սա Նախադրութիւններուն ներհակը, (Տե՛ս Լրացուցիչ Գրականութիւն, էջ 167. — Հրահանգ Բ.) :

Հակառակ, հետո, հետ, վար, առջեւ, տակ, ներս, զատ, մօտ, միասին, ետեւ, դուրս :

37. Ո՞ր նախադրութիւններ իրենց խնդիրէն առաջ կը գրուին : — 38. Որո՞նք խնդիրէն ետք կը գրուին : — 39. Ի՞նչ հոլով կ'առնէ Նախադրութեան խնդիրը :

18. ԳՍՍ. — ՎԵՐԼՈՒԹՈՒԹԻՒՆ

40. Գոյականը վերլուծելու համար պէտք է բնի՛ Յասո՛ւն է թէ Հասարակ, Եզակի՞ թէ Յոփնակի, և ի՞նչ հոլով է : Յետոյ, բնի հետ թէ ի՞նչ պաշտօն ունի խօսքին մէջ. Տէրբայի՞, Ստեփանի՞, Բնութեան խնդիր, Յասկացոյցի՞ կամ Յասկացեալ :

Օրինակ. — Հայրս ինձի համար նոր կոշիկներ դնեց : Աս խօսքին մէջ հայրս բառն է Հասարակ անուն Եզակի ուղղական, և Գիմարոյ յօդով. Տէրբայի է գնեցին :

51. Վերլուծեցէք սա խօսքերը :

1. Լամբեր դեռ հագած չէի. — 2. Մեկտեղ թղթիս վրայ թափեցաւ : — 3. Մենք հոգով կը կշտանանք :

52. Որո՞նցէք նետեալ առարկաներուն համար : Շարք, բացախ, բողկ, ծովի ջուր, մեղր, կոտեմ, սոխ, ագոխ, ուռի, կիտրոն, սխտոր, անուխ, Թրմնուկ, նուռ, Թուզ :

40. Գոյականը վերլուծելու համար ի՞նչ բաներ բնելու է :

19. ԴԱՍ. — ՀՐԱՀԱՆԿՆԵՐ

53. Սահմաններուն համապատասխանող բառերը գտե՛ք եւ գրե՛ք կէտերուն տեղը, (Գ. Վարժ. էջ 49, Հրահ. 46):

1. Գիծ մը որ աղէղի պէս լարուած է կամ ձկրանի գոտիի ձև ունի, կը կոչուի ... : — 2. Կէտէ մը ուրիշ կէտ քաշուած ամենէն կարծ գիծն է ... : — 3. Իրարու կցուած շատ մը ուղիղ գիծեր ... : — 4. Ուղիղ քաշուած գիծ մը ... : — 5. Ամբողջ երկայնութեամբ իրարմէ հաւասարապէս հեռու եղող երկու գիծեր ... : — 6. Հորիզոնին ուղղութեամբ քաշուած գիծ մը ... : — 7. Կոր գիծ մը որուն բոլոր կէտերը հաւասարապէս հեռու են կեղտոն կոչուած ներքին կէտէ մը ... : — 8. Շրջանակի մը մէկ մասը ... : — 9. Ուղիղ գիծ մը որ շրջանակին երկու կէտերը կը միացնէ՝ ... : — 10. Երբ երկու ուղիղ գիծ իրարու հանդիպին, կը կազմեն ... մը : — 11. Մակերես մը որ երեք ուղիղ գիծերով շրջապատուած է՝ ... :

20. ԴԱՍ — ԱՄՓՈՓՈՒՄ 14, 15, 16, 17, 18 ԴԱՍԵՐՈՒ

Մակերայ. — Մակերայը անտիտիտ բառ մ'է կը գրուի բայերուն քով, և կը ցուցնէ գոյժողութեան եղանակը, ժանանակը, տեղը, ֆանակութիւնը (չափը) կամ հնարքը, հաստատութիւն, քացառութիւն, ստատիյս, ևւն :

Մակերայը կրնայ երկու կամ աւելի բառերէ կազմուիլ, այն ատեն կը կոչուի Բարդարեայ մակերայ :


Նախադրութիւն. — Նախադրութիւնը անտիտիտ բառ մ'է որ երկու բառի (Գոյականի կամ Դերանունի և Բառի) մէջ յարաբերութիւն կը ցուցնէ :

Նախադրութիւն առնող բառը (Անուն կամ Դերանուն) կը կոչուի Նախադրութեան խնդիրը :

Նախադրութիւններէն մէկ քանին իրենց խնդիրէն առաջ կը գրուին, մէկ քանին ալ ետքը :

Ամէն նախադրութիւն միւսնոյն հոլովով խնդիր է՛ առներ :

Անունի վերլուծումը. — Անուն մը վերլուծելու համար որոշելու է թէ ինչ ատաս' է, ինչ թիւ է, ինչ հոլով է, և ինչ պաշտօն կը կատարէ խօսքին մէջ :



1001
11045

1. ԽՍՏԱԿՑՈՒԹԻՒՆ. — Ի՞նչ բանի մէջ կը կայանայ բաշտարիւնը. — Անգամ մը Արարիոյ լեռներուն մէջէն ուղտերու մեծ կարավան մը կ'անցնէր՝ ապրանք բեռցուած : Հարուստ վաճառականներն իրենց ապրանքին հետ մէկտեղ կը ճամբորդէին : Երբ մտան այնպիսի խորունկ ձորի մը մէջ ուր մինակ երկնքի կապոյտը կ'երեւէր, յանկարծ շատ մը ձիաւորներ քարերու ետեւէն դուրս թափեցան և կարավանին առջեւը բռնեցին : Անոնք աւազակներ էին և կ'ուզէին կարավանը կողոպտել :

Վաճառականներուն մէջ մէկը կար, քառասուն տարեկան միջահասակ քաջ մարդ մը, որ անմիջապէս բոլոր ջորեպաններուն ու վաճառականներուն գլուխն անցաւ, և հրաման ւրբաւ որ կարավանը կեցընեն : Յետոյ հաւաքեց իր բոլոր մարդիկը, ձիերուն ետեւ մտցուց զանոնք և հրացանները ուղղեց աւազակներուն, գոռալով «Կա՛մ հեռացէ՛ք կա՛մ կը զարնենք» : Աւազակները տեսան որ իրենց գործը դէ՛ռ է, քաշուեցան և մըտքերնին դրին երթալ ձորին միւս բերանն սպասել :

Քաջասիրտ վաճառականը որ շատ ճամբորդութիւններ ւրբաւ էր և աւազակներու հնարքները գիտէր, անմիջապէս կարավանին գլուխը դարձուց և ճամբան փոխեց : Կը տեսնէ՞ք հիմայ : Այս քաջ մարդը նախ չվախեցաւ և քաջութեամբ աւազակները հեռացուց, բայց յետոյ խոհեմութիւն ւրբաւ և ճամբան փոխեց :

1. Առում. — Այն մարդը որ անհարսապիս քաջ է, խոհեմ ալ է :

Նոր Դպրոց, Է. Պրակ

2. Առած. — Բայ մարդը նախ կ'ուզի վսակգեև հե-
նանայ, բայց երբ տեսնէ որ անկարելի է, ամեն բան աջի
կ'առնէ:

2. ԽՈՍՍԱԿՑՈՒԹԻՒՆ. — Վաստատութիւն. — Միտաք
աղէկ տղայ էր, իր մայրը շատ կը սիրէր, բարիք կ'ը-
նէր շատ անգամ և իր դասերն ալ աղէկ կը պատրաս-
տէր: Բայց դժբախտաբար վատասիրտ էր: Միտաք մու-
թէն կը վախնար, միտ մինակ չէր կրնար մէկ սենեակէն
մըտը երթալ: Այս հերիք չէր, ուրիշ աւելի մեծ վա-
տաւթիւն մ'առնէր. — երբ յանցանք մը գործէր, ուրի-
շին վրայ կը ձգէր, սուտ կը խօսէր՝ երդում կ'ընէր թէ
ինքը չէ բրած:

Այս աղտոտ ընտարութիւնը շատ գէշ բրաւ Միտա-
քին վիճակը, որչափ մեծցաւ՝ ծուլացաւ: Միտաք հա-
մարձակութիւն չունէր մէկու մը ներկայանալու, գործ
ուզելու, գործ տեսնելու, ասոր համար թշուառ եղաւ՝
երբ դժբաղդաբար իր հայրը մեռաւ: Կը տեսնէ՞ք, վա-
տասարտութիւնը ամէն տեսակ թշուառութիւն կը բերէ
մարդուս գլխուն: Պէտք է մանուկ հասակէն ուղղել
այս թերութիւնը:

3. Առած. — Վաստասիրտ մարդը ամենեկն քեթեք գոր-
ծերէն իսկ կը վախնայ:

3. ԽՈՍՍԱԿՑՈՒԹԻՒՆ. — Բաշուքիւնը գեղեցիկ բան է.
— Ատենով թշնամիներ կուգան Հոռոմ քաղաքին վրայ
որ զայն առնեն: Բայց քաղաքը մտնելու համար պէտք
էր կամուրջէն անցնելին: Թշնամիները երբ կամուրջին
կը մօտենան, քաջ երխասարդ մը Որատիոս Կոկլէս ա-
նունով, գէտ կը գնէ անոնց, մինչեւ որ իր ընկերները
ետնել կողմէն կամուրջը կը փլցնեն: Այն ատեն իր հա-
գուստներով ու զէնքերով գետին մէջ կը նետուի և լո-

զայով միւս կողմը կ'անցնի: Որատիոս ազատած էր
ամբողջ քաղաքը, ամէն մարդ կը գովէր անոր բրածը:

4. Առած. — Բայ մարդը մը հաւար անկարելի
բան յիայ:

5. Առած. — Այն մարդը որ միշտ փառաբան ունի իր
արհիւն մեջ, ուրիշին պաշտպանութեանը պէտք չունի:

4. ԽՈՍՍԱԿՑՈՒԹԻՒՆ. — Պատիւը կեանքէն նախանշուած
համարելու է. — Այո՛, մարդը իր պատիւը պահելու է,
եթէ հարկ ըլլայ պէտք է կեանքը զո՛նէ պատիւը փըր-
կելու համար: Ատենով, թշնամիներ նորէն կը յարձակին
Հոռոմ քաղաքին վրայ: Քաղաքացիներուն մեծ մասը կը
փախչի, մնացածն ալ քաղաքին մէջտեղը գտնուած ա-
մուր բերդի մը մէջ կը մտնէ: Քաղաքին մեծերը, որ ծե-
րունի մարդիկ էին, ամօթ կը տեսնէին փախչիլը, ուստի
իրենց տուներուն առջեւը կը նստին մարմարէ ակօսնե-
րու վրայ: Թշնամիները երբ կը տեսնեն այդ ծերունի-
ները, կը սպաննեն զանոնք: Ծերունիներն իրենց կեան-
քը տուին, իրենց պատիւը մաքուր պահելու համար:

6. Առած. — Անպատիւ կ'ըլլա իր այն մարդը որ շա-
հու հաւար իր պատիւը ոտնակոխ կ'ընէ:

5. ԽՈՍՍԱԿՑՈՒԹԻՒՆ. — Բնու պէտք չէ վախնալ. — Վախ,
ինչ ստորին բան է սա վախնալը, ինչ ամօթ բան: Տը-
ղաքները պէտք է վարժուին բանէ մը չվախնալու, ո՛չ
մուտքէն, ո՛չ ալ ուրիշ ո՛րեւէ բանէ որ իրօք վտանգա-
մութէն, ո՛չ ալ ուրիշ ո՛րեւէ բանէ որ իրօք վտանգա-
ւոր չէ: Անգամ մը Պետրոս պարտէզի մը մէջ կը պտը-
տէր: Հոն վարը՝ շատ մը խոտեր բուսած էին: Երբ այդ
խոտերուն մօտեցաւ, յանկարծ տեսաւ որ օձ մը գլուխը
անկեր իրեն կը նայի: Պետրոս սարսափեցաւ, պտուց և
փախաւ: Բայց երբ պարտէզին ծայրն հասաւ, հոն կե-
ցաւ ու դիտեց որ իր ետեւէն բան մ'եկած չէ: Պետրոս

ամէցաւ, ինքզինքը մեղադրեց. « Ի՞նչ կայ, ըսաւ ինքն իրեն, թող օձ մ'ըլլայ», ու գնաց նորէն վարի խտտերուն քով: Ի՞նչ տեսնէ աղէկ: Ծուռումուռ փայտի կտոր մը...: Պետրոս միտքը դրաւ անկէ յետոյ չվախնալ և կամայ կամաց քաջասիրտ եղաւ:

7. Առած. — Երբ յսկիարծ բաւեւ մը կը վախնաս, ևն'րեւ զարձիւր ակնոր քով գնա, վախդ կ'անցնի:

8. Առած. — Վախիտս մտադը դժբախտ կ'ըլլայ:

6. ԽՍՍԱԿՑՈՒԹԻՒՆ. — Պէտք է նկարական ցաւերու դիմանալ. — Ձեզի բարեկամներէս մէկուն պատմութիւնը ընեմ: Այս տղան դպրոցէն ելլելէ յետոյ, գործ չգտաւ անմիջապէս: Մայր մ'ունէր և երկու քոյր. անոնց պիտի օգնէր: Ի՞նչ ընէր խեղճ տղան: Ստիպուեցաւ երկաթազործի մը քով աշկերտ ըլլալ: Ծառաթը պզտիկ բան մը կ'առնէր, առտուրնէ մինչեւ իրիկուն կը չարչարուէր: Բայց շատ քաջ էր տղան, չյուսահատեցաւ, իր մօրը սիրոյն համար ամէն նեղութիւն քաշեց, վերջապէս այսօր նշանաւոր երկաթագործ մ'եղաւ: Հիմա երջանիկ է ինքը և երջանիկ ըրած է իր մայրն ալ:

9. Առած. — Ո՛վ որ քիչ մը ևեղորքեաւ չի կրնար դիմանալ, աւելի մեծ ևեղորքիւններու պիտի հաղիպի:

3. ԽՍՍԱԿՑՈՒԹԻՒՆ. — Պէտք է վիշտերու դիմանալ. — Այո՛ տղաքներս, օր պիտի դայ որ ցաւեր ունենաք, վիշտեր կրէք, պէտք է քաջ ըլլաք այդ վիշտերուն, ցաւերուն դիմանալու համար: Դուք, փառք Աստուծոյ, քաջաուղջ էք: Բայց չէ՞ք տեսած՝ նիշար, երեսնէրուն դոյնը նետած տղաքներ որ տունէն դուրս չեն կրնար ելլել. անոնք հիւանդ են: Աստուած չընէ, ևթէ դուք ալ օր մը հիւանդանաք, պէտք է համբերութեամբ ցաւին դիմանաք:

2. ք տնտեր շատ անգամ աղքատիկ տղաքներ որ փողոցները կը թափառին՝ կիսամերկ, բոկոտն՝ իրիկունը չոր ու ցամաք հաց մ'ունին ուտելու, ու կը պառկին չոր կամ թաց գետնի վրայ: Անոնք կը դիմանան այդ վիշտերուն: Մենք ալ մարդ ենք, կարելի է օր դայ որ անոնց պէս աղքատանաք: Այն ատեն պէտք է որ քաջութիւն ունենանք, դիմանանք այդ վիշտերուն: Անոնք կ'անցնին և օր մը ուրախ օրեր կը յաջորդեն:

10. Առած. — Աւեւ վիշտ քաջութեամբ սակեալ:

11. Առած. — Հիսուայի է ակն մտադը որ քաջութեամբ և առակց զակզաւեղը կը դիմանայ վիշտերու:

8. ԽՍՍԱԿՑՈՒԹԻՒՆ. — Քաջութիւնը անպահաւ պէտք է. — Լսեցէ՛ք պզտիկ տղու մը պատմութիւնը: Խորէն դեռ տասնընիւց տարեկան էր երբ իր հայրը մնաւ: Խեղճ տղուն մայրը շարունակ կուտար, որովհետեւ այլեւս պաշտպան մը չունէին: Պզտիկ Խորէն ամէն օր սիրտ կուտար իր մօրը, և կ'ըսէր որ ինքը պիտի աշխատի իրենց համար: Եւ իրաւ ալ Խորէն գնաց դերձակ մը գտաւ և անոր ըսաւ որ զինքը քովն առնէ: Գերմանացի քանակաւոր հաւանեցաւ տղուն որ անմիջապէս դանի իր քովը պահեց: Խորէն աշխատեցաւ գիշեր ցորեկ և մայրը մխիթարեց: Եթէ Խորէն քաջութիւն չունենար, շատ թշուառ պիտի ըլլար ինքն ալ, մայրն ալ:

ԱՄՓՈՓՈՒՄ ԵՐԹՆԵՐՈՐԻ ԱՄՍՈՒԱՆԷ

Ո՛վ որ բաշ է, առաքինի է, որովհետեւ ցաւերուն ու վիշտերուն կը դիմանայ, Կեանքի մէջ պէտք է վատասիրտ ըլլալ, վատասիրտ մարդը թշուառ կ'ըլլայ: Տղայ մ'որ պզտիկ հասակէն կը ցուցնէ բաշտեթիւն կամ վատութիւն, Ամէն առաքինի մարդ պատիւը նախաձեռն կը սեպէ կեանքէն: Տղայ մը պէտք է ամէնայ ինքրիմէ, երբ վախկոտ է: Կեանքի մէջ շատ անգամ դժբաղդութիւններու կը հանդիպենք, պէտք չէ որ վախանաք, համբերելու և բաշ ըլլալու ենք, ուրախ օրեր կուգան:

ՔԱՂԱՔԱՑԻԱԿԱՆ ԿՐԹՈՒԹԻՒՆ

1. ԴԱՍ — ԴԱՏԱՐԱՆՆԵՐ

1. — Ժողովուրդին մէջ ծագած վէճերը, անհամաձայնութիւնները և թեթեւ կամ ծանր խնդիրները Գաղաքային Դատարաններու (Մեխսիսիս երկրային) առջեւ կը քննուին, կը դատուին և կը վճռուին: Ասոր կ'ըսուի դատավարութիւն:

2. Դատերը երկու տեսակ են. Հռզուգ (քաղաքային կամ առեւտրական) և ձեզա (պատժական):

Հռզուգի կը վերաբերին ամէն տեսակ առեւտրական խնդիրներէ ծագած վէճերը, այսինքն առնելիք-տալիքի, կալուածական գործերու, հողային սեփականութեան վերաբերեալ նիւթական կամ դրամական անհամաձայնութիւններ:

ձեզայի կը վերաբերին մարդ ծեծելու, կռուելու, նախատելու, վիրաւորելու, գողնալու, սպաննելու, խարդախելու պէս գործերը:

3. Հռզուգի դատերուն համար դատարանները (Մահիկե) նիւթական վեաք փոխարինելու վճիռ կու տան: Իսկ ձեզայի դատերուն համար յանցաւորին կու տան այլեւայլ պատիժներ. բանտարկութիւն, տուգանք, աքսոր, բերդարգելութիւն, մահու պատիժ:

4. ձեզայի վերաբերեալ դատերը երեք աստիճան են. Գալաքայի (կանոնադանցութիւն), ձիւնիս (յանցանք) և ձիւնայի (ոճիր կամ եղեռն):

1. Ո՛ր կը բնուից վիճերը: — 2. Դատերը բանի՞ տեսակ կ'ըլլան: Որո՞նք են հռզուգի դատերը, որո՞նք են ձեզայի դատերը: — 3. Հռզուգի դատերուն համար դատարանները ի՞նչ վիճու կուտան: Իսկ ձեզայի դատերուն համար: — 4. Բանի՞ աստիճան են ձեզայի դատերը:

2. ԴԱՍ. — ԴԱՏԱՐԱՆՆԵՐՈՒՆ ԱՍՏԻՃԱՆԸ

1. Նիզամիյե դատարանները երեք աստիճան են. Նախադատ (Պիսայեթ), վերաքննիչ (Իսթիլաֆ) և վճռաբեկ (Թեկեթիգ) աստիճաններ:

2. Գալաքայի և Մաննագներու մէջ կայ Պիսայեթ մահիկե: վիշայեթներու մէջ կայ, Պիսայեթէն դատ, նաեւ Իսթիլաֆ մահիկե: Իսկ Թեկեթիգ դատարանը միայն Պոլսոյ մէջ է:

3. Օրինակ մը. — Ըսենք թէ Գրիգորը Մինասէն 500 լրջ. առնելիք ունի և Մինասիչի վճարեր իր պարտքը: Եթէ երկուքն ալ Նանիյեի կամ Գալաքայի մէջ են, Գրիգոր Գաղաքային Նախադատ Ատեանին աղերսազիր կուտայ, որոշեալ օր մը դատարանին Նախագահը երկուքին ալ Կոչնագիր կը լրկէ, զանոնք դատարան կը հրաւիրէ և դատը կը քննուի: Եթէ Գրիգոր կրնայ հասնել իր առնելիքը, դատարանը կը վճռէ որ Մինաս տատել իր առնելիքը, դատարանը կը վճռէ որ Մինաս անտարիֆի վճարէ:

Կրնայ ըլլալ որ Մինաս գո՛ն չըլլայ այս վճիռէն, այն ատեն վճռագիրն (իլալ) առնելով՝ կը դիմէ վերաքննիչ Ատեանին, որ դատին վերաբերեալ թղթերը կը քննէ, և եթէ դատավարութեան մէջ թերութիւնը կը եղած է, դատը վերաքննելու որոշում կուտայ: Ան մը եղած է, դատը վերաքննելու որոշում կուտայ: Ան ատեն նորէն Նախադատ Ատեանին մէջ կը դատուի:

1. Բանի՞ աստիճան են Նիզամիյե դատարանները: — 2. Ո՞ր տեսակ կը գտնուից ասոնք: — 3. Դատարաններու օրինակ մը բնի: Ի՞նչ բնի է Կոչնագիր (ձեղ պիւզեթ-ֆեթի): Ի՞նչ բնի է վճռագիր (իլալ): Գրիգորին ու Մինասին միջեւ եղած դատին մէջ ո՞վ է Գալաքայի Միսայի (Միսսայի), և ո՞վ է ամբաստանալ (Միսսայի ալիյե):

3. ԳԱՍ. — ՀԱՇՏԱՐԱՐ ԱՏԵԱՆՆԵՐ ԵՒ ՇԷՐԻԻ ԴԱՏԱՐԱՆՆԵՐ

1. Դատարաններէ զատ, կան Հաշտարար Ատեաններ որոնք առնելիք-տալիքի ու թեթեւ յանցանքի դատեր կը քննեն ու կը դատեն:

2. Հաշտարար ատեան են զիւզերու մէջ Ինքիւտար մեհնիսի և զիւզախմբերու մէջ Նահիյե մեհնիսի:

3. Դատեր ու վէճեր կան որ ո՛չ պատժական են ո՛չ ալ առեւտրական: Օրինակ. — Մարդ մը կը մեռնի և անչափանաս զաւակ կ'ունենայ. ասոր իրաւունքին պաշտպանն է Շերիի դատարանը (Մահիեմեհի շերիյե): Ասոր պէս ալ կը պատահին ուրիշ դատեր՝ էրիկ կնկան մէջ, մեռնողի մը ժառանգորդներուն մէջ, ևւայլն: Այս տեսակ դատերը կը տանուին Շեյխ իսլամի դուռը (Պուլի) և զաւանդու Շերիի դատարաններուն մէջ:

4. Քրիստոնեաներու այս կարգի ամուսնական, ժառանգական, պարէնի վէճերը կը քննուին Պատրիարքարաններու և Առաջնորդարաններու կողմէ (ինչպէս մեր Պատրիարքարանին մէջ Դատաստանական Խորհուրդին կողմէ) և ասոնց տուած վճիռը վաւերական և ընդունելի է Քաղաքային դատարաններու առջև:

5. Քաղաքային պաշտօնեաներու դատերը Պետական Խորհուրդը կը վճռէ: Իսկ զինուորականներու դատերն ալ Սպարապետութիւնը:

1. Հաշտարար Ատեաններու (Տեյալիի տուրիյե) պաշտօնը ի՞նչ է: — 2. Ո՞ր տեղեր Հաշտարար Ատեան կը ըլլայ: — 3. Շերիի դատարանը ի՞նչ տեսակ դատերու կը նայի: — 4. Քրիստոնեայ ազգերու մէջ ընտանեկան, ժառանգական եւ պարէնի (նափազա) դատեր ո՞վ կը նայի: Ասոնց վճիռը վաւերական եւ ընդունելի՞ է Պետական Դատարաններու կողմէ: — 5. Պետական Խորհուրդը ի՞նչ դատեր կը վճռէ: Իսկ Սպարապետութիւնը:

4. ԳԱՍ. — ԴԱՏԱՐԱՆՆԵՐՈՒ ԿԱԶՄՈՒԹԻՒՆԸ

1. Դատարանները կը կազմուին Նախագահէ մը (Րեիս) որ կ'ընտրուի Վեհ. Սուլթանին իրաշեռով, և 3 կամ 5 անդամներէ (ազա) որոնք կ'ընտրուին տեղական կառավարութեան Վարչական Ժողովներուն կողմէ: Նախագահին բացակայութեան ատեն, անդամներէն մէկը կրնայ փոխանորդել:

2. Ամէն կարգի դատարաններ կ'ունենան նաեւ քարտուղայններ (ֆեսքիս), արձանագորիչ պաշտօնեաներ (մուզայեիս), օգնական գրագիրներ, բարապաններ, ևւն:

3. Դատ մը վարելու համար դատախազը (միսսաի) և ամբաստանեալը (միսսաի ալեյի) կրնան անձաժը դատարան ներկայանալ և կամ փոխանորդներ (սալիս վեֆիյի) զրկել: Այս փոխանորդութիւնը կը կատարեն օրէնսգէտ անձեր կամ փաստագրաններ:

4. Պատժական դատերու նախաքննութիւնը կը կատարէ Հարցաքննիչ Դատարարը (Միւսաբնիզ) և այս քննութեան վերաբերեալ թղթերը կը զրկէ Ընդհ. Դատախազին (Միսսաի ումումի) որ կը վճռէ կամ դատ վարելու պէտքը (չիզուալի մուհաֆեմե) և այն ատեն թղթերը դատարանին կը յանձնէ, և կամ դատալարութեան տեղի չունենալը (մեհնի մուհաֆեմե):

5. Դատաւոր մը օրէնքի և արդարութեան համեմատ վճիռ արձայելու պաշտօն ունի. հետեւաբար պէտք է ըլլայ ուշիմ և մտացի, ուղղամիտ և արդար, հաւատարիմ և վստահելի, լըջախոս և անաչառ:

1. Դատարաններ ինչերէ՞ կը կազմուին: — 2. Ուրիշ ի՞նչ պաշտօնեաներ կ'ունենայ դատարանը: — 3. Ի՞նչ է Միսսաի, ի՞նչ է Միսսաի ալեյի: Ասոնք երբ անձամբ չներկայանան դատարան, ի՞նչ կ'ընեն: Ո՞վ կրնայ փոխանորդ ըլլալ: — 4. Պատժական դատերու նախաքննութիւնը ո՞վ կը կատարէ: Թղթերը ու՞ր կը զրկէ: Ի՞նչ ըրիւնք ո՞վ կը կատարէ: Թղթերը ու՞ր կը ըրիւնք: Ի՞նչ ըրիւնք է «մեհնի մուհաֆեմե»: — 5. — Ի՞նչպէս ըլլալու է դատաւոր մը:

ՀԱՅ-ԵԿԵՂԵՑԱԿԱՆ ՊԱՏՄՈՒԹԻՒՆ



1. ԴԱՍ. — ԵԿԵՂԵՑԻՆԵՐ

1. Եկեղեցի. — Քրիստոսի հիմնած կրօնքը վսեմ ու բարձր է և կը կոչուի Քրիստոնեոսքիսն որ բաժնուած է սա երեք եկեղեցիներուն, Արեւելեան եկեղեցի, Արեւմտեան եկեղեցի և Բողոքական եկեղեցի:

2. Արեւելեան եկեղեցի. — Արեւելեան կը կոչուի այն եախիկն եկեղեցին զոր Քրիստոս հիմնեց Երուսաղէմի մէջ առաքեալներուն ձեռքով, որոնք յետոյ տարածեցին Հայերուն մէջ, նոյնպէս Յունաստան, Եգիպտոս, Փոքր Ասիա և ուրիշ տեղեր: Արեւելեան եկեղեցիներն են գլխաւորաբար Հայ և Յոյն: Թէեւ ազգով ու ծէսով իրարմէ կը տարբերին, բայց ունին միեւնոյն աստուածային գլուխը որ է Յիսուս Քրիստոս:

3. Հայոց եկեղեցին. — Հայոց եկեղեցին հեթանոսներուն մէջ անդրանիկն եղաւ: Ինչպէս տեսանք, Թաղէոս ու Բարթողիմէոս առաքեալները կազմակերպեցին զայն. և ասոր համար առաջերսկան է: Յետոյ, Ս. Գրիգոր Լուսաւորիչ և անոր յաջորդները քրիստոնէական հաւատքին փրկարար վարդապետութիւնն ամէն տեղ տարածեցին՝ քարոզելով ու եկեղեցիներ շինելով:

4. Արեւմտեան եկեղեցին. — Նախապէս Հռոմի մէջ հիմնուեցաւ Արեւմտեան եկեղեցին որ յետոյ տարածուեցաւ Եւրոպա, Ափրիկէ և ուրիշ տեղեր: Այս եկեղեցին իրեն հողեւոր գլուխ կ'ընդունի Պապը՝ որուն համար Պապական անունն ալ կը կրէ: Պապը կը ճանչնան իբրեւ յաջորդ Պետրոս առաքեալին:

5. Բողոքական եկեղեցի. — Բողոքականութիւնը Պապական եկեղեցիէն բաժնուած է: Մարտինոս Լուտեր անունով մէկը, որ աստուածաբան կրօնաւոր մ'էր, հակառակեցաւ, մեծ պայքարներ մղեց Պապական եկեղեցիին դէմ: Եւրոպական տէրութեանց միջոցաւ կազմեց եկեղեցի մը որ կոչուեցաւ Բողոքական = Բրոքսքան եկեղեցի:

Լուտեր Եկեղեցիի եօթը Խորհուրդներէն՝ Մկրտութիւնն ու Ս. Հաղորդութիւնը միայն ընդունեց՝ մերժեց բոլոր առաքելական գարրողութիւնները: Բողոքականութիւնն, անհամաձայն ինք իր մէջ, բաժնուած է բազմաթիւ յարանուանութեանց:

1. Ի՞նչ կը կոչուի Քրիստոսի հիմնած եկեղեցին: Քանի՞ բաժնուած է: — 2. Ո՞րն է Արեւելեան եկեղեցին: — 3. Ի՞նչ գիտէ Հայ եկեղեցիին վրայ: — 4. Ի՞նչ գիտէ Արեւմտեան եկեղեցիին վրայ: — 5. Ի՞նչ է Բողոքականութիւնը եւ ո՞վ հաստեց: Եօր խորհուրդներէն որո՞նք կ'ընդունի Բողոքական եկեղեցին:



2. ԴԱՍ. — ՏԻԵՂԵՐԱԿԱՆ ԺՈՂՈՎՆԵՐ

6. Ժողովներ. — Հայց. Ս. Եկեղեցին երեք Տիեզերական Ժողով կ'ընդունի:

1. Նիկիոյ Ժողով. — Որ գումարուեցաւ Ս. Գրիգոր Լուսաւորիչի օրով, (Ն. Պրակ, էջ 15, Դաս 2):

2. Կ. Պոլսոյ Ժողով. — Կ. Պոլսոյ պատրիարքներէն Մակեդոն ուղեց նորահար վարդապետութեամբ նշանաւոր ըլլաւ: Ասոր մոլորութիւնը կը վարդապետէր թէ Հոգին Սուրբ Աստուած չէ, այլ առաջին դասի հրեշտակ մը:

150 հայրապետ Կ. Պոլիս Ժողովուեցան 381ին ու դատապարտեցին Մակեդոնը:

Այս ժողովը կը տօնենք Բուն Բարեկենդանի նախընթաց շաբաթ օրը :

3. Եփեսոսի ժողով. — Բրիտանի 430 թուականին, Կ. Պոլսոյ մէջ խնդիր եղաւ թէ Ս. Կոյս Մարիամը պէ՞տք էր անուանել Աստուածածին, թէ լո՞վ մայր Բրիտանի : Այն ատեն Յոյն պատրիարք Նեստոր եկեղեցիին մէջ ժողովողին քարոզեց թէ Ս. Կոյս՝ Աստուծոյ մայրը չէ :

Թէ՛տղոս Յոյն Կայսրը 431ին ժողով կազմեց Եփեսոս քաղքին մէջ : Ամէն կողմէ հաւաքուեցան 260 եկեղեցական : Նեստորի մոլորութիւնը հերքուեցաւ այս ժողովին մէջ որուն կանոններն ու պատմութիւնը բերին Ս. Սահակի աշակերտները որոնք հոն ներկայ էին : Աշտիշատի եկեղեցական ժողովին մէջ 433ին, յարգութեամբ ընդունուեցաւ Եփեսոսի ժողովին վճիռը :

Հայց. եկեղեցին կը տօնէ այս եկեղեցական ժողովն ամէն տարի Ս. Աստուածածնի Վերախոխման Բարեկենդանի նախընթաց օրը, Շաբաթ :

3. Հայ եկեղեցիին չընդունած ժողովները. — Բացի այս երեք ժողովէն զորոնք Սուրբ կը կոչենք, որովհետեւ ընդհանուր եկեղեցին իր ներկայացուցիչն ունեցած է, հաւատքի դաւանութեանց ու կանոնական վարդապետութեանց մասին Յունական ու Պապական եկեղեցիներն ուրիշ բազմաթիւ ընդհանրական ժողովներ ալ կ'ընդունին, ինչպէս Բաղիտորնի = Գասը-ֆեոյի ժողովը 451ին : Այդ ժողովներուն մասնակցութիւն չէ ունեցած Հայց. եկեղեցին և զերծ մնացած է նորահար վարդապետութիւններէ :

6. Մեր եկեղեցին քանի՞ ժողով կ'ընդունի : 1. Նիկիոյ ժողովին մէջ ի՞նչ վնասուեցաւ : 2. Կ. Պոլսոյ ժողովին մէջ ո՞վ դասապարտուեցաւ եւ ինչո՞ւ : Ե՞րբ կը սօսենք Կ. Պոլսոյ ժողովը : — 3. Ինչո՞ւ գումարուեցաւ

Եփեսոսի ժողովը : — Քանի՞ եկեղեցական ներկայ երևո՞ւն : — Ի՞նչ կ'ըսէր Նեսար : — Մեր եկեղեցին ալ ընդունա՞ծ է Եփեսոսի ժողովին վնասը, ո՞ր բուականին եւ ո՞ր ժողովի մէջ ընդունած է : — Ե՞րբ կը սօսենք Եփեսոսի ժողովը : — 7. Երեք Տիեզերական ժողովներէն զայս ժողովներ ալ կ'աւն : — Հայ եկեղեցին ինչո՞ւ չ'ընդունիր այդ մասնաւոր ժողովները :

3. ԴԱՍ. — Ս. ՂԵՒՈՆԳԵԱՆՔ ՈՒ Ս. ՎԱՐԴԱՆԱՆՔ

8. Բրիտանական հաւաստիք պաշտպանութիւնը. — Մինչ 451ին Բաղիկեդոնի ժողովը կը գումարուէր, Ս. Վարդան, Ս. Սահակ Հայրապետին թոռը, և Ս. Ղեւոնդ քահանայն, իրենց ճշմարիտ կրօնասէր ընկերներովը, հեթանոսներու դէմ քրիստոնէական հաւատքի պաշտպանութեան համար նահատակուեցան ու պահեցին մեր Ս. Եկեղեցիին գոյութիւնը :

Ս. Ղեւոնդեանք, իբրեւ սրբաւէր հողեւոր պաշտօնեայ Բրիտանի Ս. Աւետարանին, իրենց անձը օրինակ հանդիսացուցին ժողովողին որ ամէն պարագայի մէջ հաւատարիմ մնան իրենց Մայրենի Եկեղեցիին :

Ս. Վարդանանց տօնի օրը յիշատակ է Մեռելոց և տօն :

1. Ս. Վարդան եւ Ս. Ղեւոնդ ի՞նչ ըրին մեր կրօնը պաշտպանելու համար : — Ի՞նչ եղան : — Ի՞նչ օրինակ սուին ասով : — Ե՞րբ կը սօսենք անոնց յիշատակը :

4. ԴԱՍ. — ԵԿԵՂԵՑԻ ՊԱՇՏՈՆԵԱՆԵՐԸ

9. Եօրը աստիճան — Եկեղեցիին պաշտօնէութիւնը կը բաժնուի եօթը աստիճանի : Այս աստիճաններուն կը պատկանէ հողահատէ զգալի եղաւ, երբ եկեղեցին օրինաւոր կազմակերպութիւն ունեցաւ :

1. Դպրութիւն. — Հինգ աստիճան (*) ունեցողը կը կոչուի Դպիր, որուն պաշտօնն է հաւատացեալներու ժողովին մէջ Ս. Դրքէն հատուածներ կարդալ: Դպիրները Շարականներ կ'երգեն, կը սաղմոսեն ու եկեղեցական պաշտամունքի մէջ կարեւոր մասը կը կատարեն:

2. Սարկաւագութիւն. — Դպրութենէ վեր աստիճանն է Սարկաւագութիւն որուն պաշտօնն էր բարեպաշտ ժողովուրդին սուրբը կարօտեալներուն բաշխել, աղքատներուն, որբերուն և այրիներուն պաշտպան ըլլալ: Հիմա այս պաշտօնը կը կատարեն Աղքատախնամները:

Սարկաւագը, Եպիսկոպոսին կամ Քահանային իշխանութեան տակ, կը մանակցի ժամերգութեան. կանուխէն Մկրտութեան խորհուրդն ալ կը կատարէր: Առաքեալներու ատեն, կային Սարկաւագներ որոնք հաւատացեալ Յոյն հասարակութեան խնդրանքով ձեռնադրուեցան, ինչպէս Ս. Սեկիսնևոս, որ քրիստոնէական հաւատքով, յուսով ու սիրով լեցուած հաւատացեալ մըն էր: Քրիստոնէութիւնն աներկիւզ քարոզելուն ու Հրեաներու խտտարտութիւնը յանդիմանելուն համար, քարկոծմամբ նահատակուեցաւ ու եղաւ քրիստոնէական հաւատքի առաջին մարտիրոս:

10. Սարկաւագուիներ. — Առաքեալներուն ատեն կային նմանապէս կին սարկաւագներ կամ արկաւագուիներ որոնք հիւանդներն ու այրիները կը խնամէին: Մեր եկեղեցին կանուխէն զաղբեցուց կիներու պաշտօնը, բայց Հռոմէական եկեղեցին ունի մինչեւ հիմա Սարկաւագուհի ընտրելու սովորութիւնը, ծանօթ Մայրապետները: Հիմա թէեւ մեր մէջ ալ մայրապետներ կան, սակայն հին իշխանութիւնը չունին:

(*) Առաջին հինգ աստիճաններն են. Ինսպանութիւն, Դպրութիւն, Չանքնկալութիւն, Երգմանցողութիւն, Սարկաւագութիւն.

9. Եկեղեցիին պաշտօնեաները քանի՞ ասիւնան են: — Ի՞նչ է անոնց անունը: — Առաջին հինգ ասիւնան ունեցողը ի՞նչ կը կոչուի եւ ի՞նչ պաշտօն ունի: — Վեցերորդ ասիւնանն ունեցողը ի՞նչ կը կոչուի եւ ի՞նչ պաշտօններ ունի: — Ո՞վ է առաջին Սարկաւագը: — 10. Ի՞նչ է սարկաւագուիին պաշտօնը: — Ո՞ր եկեղեցիներ հիմա սարկաւագուիի (*diacouytes*) ունին:



ԳՍՍ. 5. — ԵԿԵՂԵՅԻՆ ՊԱՇՏՈՆԵՐԸ (Շար.)

11. Քահանայութիւն. — Սարկաւագութենէ վեր աստիճանն է Քահանայութիւն: Քահանան, իբրեւ ամէնուն հայր ու խնամող, ամուսնացած պաշտօնեայ մ'է. իր մաքուր բարոյականով ու գիտութեամբ իր հօտը կը կառավարէ: Չեռնադրութեան խորհուրդէն զատ, եկեղեցիին բոլոր խորհուրդները կը մատակարարէ. ժողովուրդը կը խնամէ, և կը ծառայէ Աստուծոյ ու Ս. Եկեղեցիին: Քահանան ընդհանուր ժողովրդին կողմէ կ'ընտրուի և Եպիսկոպոսը զայն կը ձեռնադրէ՝ օծելով:

Ս. Ղեւոնդեանք բառին կատարեալ նշանակութեամբ Քահանայ էին:

12. Վարդապետութիւն. — Վարդապետութիւնը մասնաւոր աստիճան մը չունի, այլ կուսակրօն՝ այսինքն ամուրի Քահանայ է. Եպիսկոպոսներուն նման վեղար կը դնէ իբրեւ նշան կրօնաւորութեան և կը կոչուի Արեւդնէ իբրեւ նշան կրօնաւորութեան և կը կոչուի Արեւդնէ իբրեւ ձեռնադրող Եպիսկոպոսը գաւազանի իշխանութիւն տայ, ա՛լ այնուհետեւ արտօնուած է եկեղեցին ատեանը քարոզել Աստուծոյ խօսքը, և Վարդապետութիւն ատեանը քարոզել Սաստուծոյ խօսքը, և Վարդապետութիւն ատեանը քարոզել Սաստուծոյ խօսքը, և Վարդապետութիւն ատեանը քարոզել Սաստուծոյ խօսքը:

Ս. Մեարոպ Ծայրագոյն վարդապետ մ'էր:

13. Եպիսկոպոսութիւն. — Աստիճաններուն ամէնէն բարձրն է Եպիսկոպոսութիւնը, վասնզի եկեղեցական թէ՛ փոքր և թէ՛ մեծ կարգերն Եպիսկոպոսը կուտայ. կը ձեռնադրուի Կաթողիկոսէն. պեա ու հսկող է եկեղեցիին, հոգեւոր հայր Քրիստոսի հօտին ու Քարողիչ առաքելական վարդապետութեանց: Բարձրաստիճան Եպիսկոպոսներ մասնաւոր տիտղոսով կը կոչուին Արևի-Եպիսկոպոս կամ Արի-Եպիսկոպոս՝ Կաթողիկոսէն զըրկուած օրհնութեան կոնդակով մը:

1. Ի՞նչ է Քահանայութիւնը (Չ. ասիւնան) եւ ի՞նչ է Քահանային պաշօնը: — 12. Ամուրի Քահանան ի՞նչ կը կոչուի: — Ի՞նչ է անոր պաշօնը: — Ի՞նչ է գաւազանի իշխանութիւնը: — Ի՞նչ բան է Ծայրագոյն վարդապետ: — 13. Եօթերորդ ասիւնանը ի՞նչ կը կոչուի: — Ի՞նչ է Եպիսկոպոսին պաշօնը: — Ո՞վ կը ձեռնադրէ զայն: — Որո՞նք Եպիսկոպոս կ'ըսուին:

6. ԳԱՍ. — ՀԱՅ ԵԿԵՂԵՑԻՆ ՈՒ ՏՈՄԱՐԸ

14. Հեցոսիկոն. — Քաղկեդոնի ժողովէն 40 տարի ետք, Յունաց Չենոն Կայսրին հանած միաւորութեան թուղթը, Հեկոսիկոն, Հայոց Բարդէն Կաթողիկոսին ձեռքը հասնելով՝ վրաց ու Աղուանից կաթողիկոսներուն հետ վաղարշապատի մէջ ժողով մը գումարեց 491ին և զայն ընդունեց:

15. Նեբուս Բ. Աշտարակեցի. — Զ. դարուն սկիզբը Նեբուս Բ. Աշտարակեցին՝ Գուին ժողով ըրաւ 527ին ուր որոշուեցաւ «Ս. Աստուածը» որ խաչեցարով երգել:

16. Հայց. եկեղեցիին անկախութիւնը. — Հայց. եկեղեցին միւս քոյր եկեղեցիներէ բաժնուեցաւ և առանձին եկեղեցի մը կազմեց Մովսէս Կաթողիկոսին կամ

«Ազգային գրադարան»



NL0240175

ՆՈՐ ԴՊՐՈՅ

ԲԱԺԱՆՈՐԴԱԳՐՈՒԹԵԱՆ ՊԱՅՄԱՆՆԵՐ

1⁰. — Դպրոցական տարին 10 ամիս ըլլալով՝ ՆՈՐ ԴՊՐՈՅն ալ տասն
Պրակներու բաժնուած է, մէն մի ամսուան համար մէկ Պրակ :

Ամէն մէկ Պրակ պիտի ըլլայ առ նուազն 5—6 տպագրական Թերթ
կամ 80—100 էջ : Պիտի պարունակէ, նիւթերուն համեմատ, գեղեցիկ
պատկերներ՝ մեծ մասը յատկապէս ՆՈՐ ԴՊՐՈՅի համար փորագրուած :

2⁰. — ՆՈՐ ԴՊՐՈՅի 10 Պրակներու բաժանորդայինն է

Պոլսոյ եւ Գաւառներու համար

25 Ղրշ.

Արտասահմանի համար

8 Ծրագրի կամ 3 Բուպի

3⁰. — Գաւառները զրկուած Պրակներու փոսթի ծախքը Գործակա
լուծիւնը կը հոգայ :

4⁰. — Տասն օրինակի բաժանորդ գրուողը 1 օրին. նուէր կը ստանայ :

5⁰. — Մէկ Պրակի գինն է 5 (հինգ) դրուշ :

6⁰. — Պրակ առ Պրակ գնողին գեղջ չկայ :

7⁰. — Տասը Պրակներն ամբողջանալուն պէս, պիտի դողրի բաժա
նորդագրութիւնը եւ այն ասան անոնց գինը պիտի ըլլայ 50 դրուշ, 1
ֆրանք, 5 բուպի, բացի փոսթի ծախքէն :

8⁰. — Պրակները պիտի ըլլան ամսական, երեք ամսական միացած
կամ 6 ական Պրակով 2 հատոր :

ՆՈՐ ԴՊՐՈՅի Ա. Պրակը «Բիւրակն ի 1900 Թիւ 33—40ին մէջ իր
նմոյշ հրատարակուած ըլլալով՝ այլ եւս այս կամ այն Պրակին նմոյշ չեն
դրկեր ո՞ր եւ է անձի, մանաւանդ որ միակ Պրակի մը պատկերովը ամբողջ
Հաւարածուն կը խանդարի ի վնաս բաժանորդի մը :

Տպագրութիւնը, պատկերները, Թաղմը, կազմը, նիւթերու բաշ
խումբը եւ տառերու ընտրութիւնը կատարուած է մասնաւոր խնամով :

Աշակերաններու զիւրութեան համար, Ուսուցիչ՝ երը կընան, փոխա
նակ 25 դրշ. բաժանորդայինը մէկ անգամէն զանձեւը, շարածական
դրութեամբ քիչ քիչ հաւաքել եւ երբ 25 դրուշն ամբողջանայ, այն ատե
մեզի հասցնել՝ միշտ ջանալով 10 ական բաժանորդային մէկէն զրկել
11րդ օրինակ մը նուէր ստանալու համար զոր կը յատկացնեն քն ուշի
աղբատ ուսանողին :

Հասցէ . — ՍՄԲԱՏ ԳՈՒԹԵԱՆ

5 Յունիս 1902

Խորասանձեակ խան, Սիրիճի, Կ. Պոլիս